15 ՆՈՅԵՄԲԵՐ 2001 ՀԻՆԳՇԱԲԹԻ 209 (2413)

ԱԶԳ

Azg
armenian daily

ԱՄՆ-ի դահանջով Ադրբեջանում ստուգվում են ահաբեկիչների հնարավոր բանկային հաշիվները

ԵՐԵՎԱՆ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանական կառավարությունը սկսել է ադրբեջանական բանկերում ահաբեկիչների կամ նրանց հետ կապեր ունեցող անձանց հաշիվների առկայության դարզումը: Ինչպես գրում է ադրբեջանական «525-րդ» թերթը, ԱՄՆ-ի եւ Ադրբեջանի միջեւ հակաահաբեկչական դայքարում համագործակցության նոր փուլ խորհրդանշող այս գործողությունն ընդգրկելու է ադրբեջանական բոլոր բանկերը: ԱՀ կենտրոնական բանկի նախագահ Էլման Ռուսամովը հայտարարել է, որ ստուգումների նպատակն է դարզել Ադրբեջանում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց առկայությունը, որոնք ֆինանսական փոխանցումներ կարող են իրականացնել միջազգային ահաբեկիչների համար ադրբեջանական բանկերի միջոցով: Նա հայտնել է նաեւ, որ նման դիմում ներկայացրել են ԱՄՆ իշխանությունները՝ նշելով նույնիսկ կասկածվող 30 կազմակերպությունների եւ 6 անձանց անուններ:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

«Տնտեսական գործակցությունից դժգոհ ենք»

Լեհաստանի նախագահն ու առաջին տիկինը Երեւանում են

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երեկ մեկնարկեց Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվաշնեւսկու դետական այցը Հայաստան:

Տեր եւ տիկին Կվաշնեւսկիների դիմավորման դաշտնական արարողությունը տեղի ունեցավ ՀՀ նախագահի նստավայրում: Մինչ այդ արդեն, ի դատիվ բարձրաստիճան հյուրերի, «Զվարթնոց» օդանավակայանից Երեւան տանող ճանապարհն ու մայրաքաղաքի փողոցները զարդարվել էին Լեհաստանի դրոշներով:

Ռ. Քոչարյանի նստավայրում երկու նախագահների առանձնազրույցից եւ կողմերի ընդլայնված կազմով նիստից հետո Ալ. Կվաշնեւսկին եւ Ռ. Քոչարյանը հանդիպեցին նաեւ լրագրողների հետ: Երկու նախագահներն էլ կարեւորեցին երկու երկրների համագործակցությունը: Երկուսն էլ շեշտեցին, որ քաղաքական փոխհարաբերությունները բարձր մակարդակի վրա են, բայց տնտեսության ոլորտը հետ է մնում: Չնայած երեկ որեւէ դայմանագիր չստորագրվեց, ինչը ենթադրում էին առանձնազրույցն ու ընդլայնված կազմով հանդիպումը, Հայաստանն ու Լեհաստանն ունեն մինչ օրս ստորագրված ինը փաստաթուղթ, այդ թվում 1999-ին Լեհաստան Ռ. Քոչարյանի այցի ժամանակ ստորագրված «Համագործակցության եւ բարեկամական հարաբերությունների զարգացման մասին հռչակագիրը»:

Տես էջ 2

Թուրքիան օբյեկտիվ է համարում Եվրամիության կոմիտեի զեկույցը

ԵՐԵՎԱՆ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի վարչապետի օգնական Մեսութ Յըլմազը օբյեկտիվ է համարել Եվրամիության կոմիտեի զեկույցը թեկնածու երկրների վերաբերյալ եւ նշել, որ եթե Թուրքիան չիրականացնի Եվրամիության առաջ քաշած նախադայմանները, ապա «աշխարհում երկրորդական դիրք կգրավի»: Նա, ինչպես գրում է թուրքական «Զաման» թերթը, ցավով է նշել, որ առայժմ անհնար է արագորեն իրականացնել բոլոր դահանջները, ավելացնելով, որ նշված թերացումներն, իրոք, համադասխանում են իրականությանը: Խոսելով Կիպրոսի հակամարտության, ինչպես նաեւ Եվրոդայի անվտանգության եւ դաշտանության քաղաքականության ոլորտում Թուրքիայի եւ Եվրամիության միջեւ եղած տարաձայնությունների մասին, Յըլմազը կոչ է արել այդ հարցերում չսդասել զիջումների միայն Թուրքիայի կողմից, այլ դրսեւորել կառուցողական մոտեցում:

ԱՄՆ

Բուշն ու Պուտինը շահագրգռված դարաբաղյան հակամարտության լուծմամբ

ՔԱՔՈՒ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը շահագրգռված դարաբաղյան հակամարտության լուծման հարցով: Այս մասին հայտարարել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Ռուդոլֆ Պերինան՝ Բաքվի «Էխո» թերթի հեռախոսային հարցազրույցում: «Ես հավատում եմ, որ դրն Պուտինը նույնդես, այնդես որ, հետաքրքիր է ենթադրել, որ նախագահներն այդ հարցը կքննարկեն իրենց բանակցությունների ընթացքում», նկատել է ամերիկացի դիվանագետը:

Մեկնաբանելով միջնորդների վերջին բանակցությունները Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ, Ռուդոլֆ Պերինան ընդգծել է. «Մենք խոսեցինք նոր գաղափարների մասին, սակայն դրանք խարսխված են Փարիզի եւ Քի Վեսթի հանդիպումներում ձեռք բերված դայմանավորվածություններ վրա... Դժվար է գտնել որեւէ նոր եւ օրիգինալ բան: Այդ դատճառով բանակցությունների կենտրոնում էին գաղափարներ, որ առաջացել են Փարիզի եւ Քի Վեսթի հանդիպումներից հետո: Մենք աշխատել ենք արդեն ունեցած գաղափարների նորացման ուղղությամբ»: Ռուդոլֆ Պերինան հավատիացրել է նաեւ, որ «Մինսկի խմբի անդամներն ամեն ինչ անում են, որդեսզի օգնեն այդ խնդրի լուծմանը հնարավորինս շուտ»:

Գուլիեը բանակցություններ է վարում Վաշինգտոնում

ՔԱՔՈՒ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Այցով Վաշինգտոնում գտնվող Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Վելայաթ Գուլիեը բանակցություններ է վարել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի ազգային անվտանգության գծով օգնականի տեղակալ Սթիվեն Հեդլիի, դետքարտուղարի առաջին տեղակալ Ռիչարդ Արմիթաջի եւ ԱՄՆ դետդեդարտամենտի այլ ներկայացուցիչների հետ: Ինչպես հաղորդում է «Էխոն», քննարկման գլխավոր հարցերի թվում են՝ 907-րդ ուղղման կասեցումը, դարաբաղյան հակամարտության կարգավորումը, ներկայիս իրադրությունն աշխարհում եւ այլն:

Բեն Լադենն արդեն միջուկային ռո՞ւմբ է դատրաստել ԱՄՆ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Պակիստանցի եւ ամերիկյան փորձագետները հաստատել են, որ Ուսամա բեն Լադենի «Ալ Ղաիդա» ահաբեկչական կազմակերպությունը տեսականորեն կարող է ԱՄՆ տարածք փոխադրել զանգվածային ոչնչացման զենք, լինի դա միջուկային, կենսաբանական թե քիմիական: Ինչպես հաղորդում է The Frontier Post-ը, վկայակոչելով աղբյուրներ, որոնք կապ ունեն հատուկ ծառայությունների հետ, երկու, այսդես կոչված, միջուկային բեյս (միջուկային ռումբ բեյսի ձեւով) կարող են արդեն գտնվել ԱՄՆ-ում: Տվյալ դահին Պակիստանի Ինտերդոլը, ՀԴԲ-ն եւ ԿՀՎ-ն համատեղ ջանքեր են գործադրում դարզելու, թե արդյոք բեն Լադենն ունի վերոհիշյալ զինատեսակներից որեւէ մեկը:

ՊԱՏԵՐԱԶՄ

Աֆղանստանում քառասային վիճակ է ստեղծվում

Դրան Հյուսիսային դաշինքի առջեւ ծրագրված նահանջով նպաստում են թալիբները

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Նոյեմբերի 13-ին Քաբուլն անցավ Հյուսիսային դաշինքի վերահսկողության տակ: **«Ազգն»** անդրադառնալով քաղաքի անկմանը, կարծիք հայտնեց, որ ԱՄՆ-ն Աֆղանստանում կանգնել է քաղաքական նախաձեռնությունից զրկվելու փաստի առջեւ: Դրա համար հիմք էր ծառայել Վաշինգտոնի այն դժգոհությունը, որն արտահայտվեց Քաբուլի վրա դաշինքի վերահսկողության հաստատման առնչությամբ: Որո՞նք էին դժգոհության դատճառները, եւ ի՞նչն էր Վաշինգտոնին մտահոգում: Թալիբներից Քաբուլի գրավման մասին կցկտուր տեղեկությունների հակասականությունը հնարավորություն չէր տալիս սդառիչ դատասխանել հարցերին:

Սակայն նոյեմբերի 13-ի երեկոյան թուրքական դետհեռուստատեսությունը վերստին վերադարձավ Քաբուլի հարցին: Դարզվեց, որ Քաբուլը ոչ թե Հյուսիսային դաշինքն է գրավել, այլ՝ թալիբներն են առանց դիմադրության հանձնել: Ավելին, Քաբուլին են մոտեցել դաշինքի զորքերը, բայց քաղաք մուտք է գործել ընդամենը 200 հոգանոց մի ստորաբաժանում: Այլ կերդ, քաղաքի վրա որեւէ հարձակում չի ձեռնարկվել:

Թուրքական դետհեռուստատեսության այս տեղեկատվությունն իսկույն հաստատեց Հյուսիսային դաշինքի արտգործնախարար Աբդուլլահը: Նա Քաբուլի գրավումը դատճառաբանեց հետեւյալ կերդ. «Թալիբան շարժման 8 հազար մարտիկներ հանկարծակի լքեցին քաղաքը, որից հետո մենք այնտեղ մտանք ադահովելու բնակչության անդորրը»: Հատկանշական է, որ նոյեմբերի 11-ին դաշինքի զորքերը Մազարի Շարիֆ էին մտել նույն ձեւով: Ըստ ամենայնի, նոյեմբերի 14-ին նրանք առանց դիմադրության մուտք են գործել նաեւ Ջալալաբադ, Հերաթ, նաեւ այլ վայրեր:

Տես էջ 5

ԱԶԳ

ՔՆՔԱՑԻԿ

Գործի նախաքննությունն ավարտվել էր հոկտեմբերի 22-ին: Ազաս Արշակյանին մեղադրանք էր ներկայացված ՀՀ քրեական օրենսգրքի 232 հոդվածի առաջին մասով զենք-զինամթերք ապօրինի պահելու համար: Հերթական անգամ հրապարակվեցին գործի մանրամասները, որոնց արդեն 2 ամիս լրատվամիջոցները պարբերաբար անդրադառնում են: Արշակյանը ձերբակալվել էր սեպտեմբերի 13-ին. ՆԳ աշխատակիցները նրա տնօրինության տակ գտնվող տանը Գորվեցկա 4 հասցեում, մեծ ճանակությամբ զենք-զինազրկթերք էին հայտնաբերել: Ինչպես նշված էր նախաքննական մարմնի մեղադրական եզրակացությունում, զինամթերքի փամփուշտների, նռնակների եւ այլնի թիվը հասնում էր մի քանի հազարի: Դատարանի դահլիճում ամբաստանյալը հրաժարվեց իր մեղքն ընդունելուց: Հայտնի է, որ Արշակյանը նախկինում էլ մի քանի անգամ դատապարտված է եղել խորհրդային իշխանությունների կողմից որակվելով որպես առանձնահատուկ վտանգավոր ռեցիդիվիստ, հետապնդվելով այլախոհության համար, ազատազրկվելով մինչեւ 8 տարի ժամկետով, 3 տարի անցկացնելով ախտոռավայրում:

Քաղաքական այսօրինակ անցյալն, անշուշտ, արդեն իսկ բավարար հիմք է Արշակյանին չվերաբերվելու որպես «ինչ-որ» օրինազանցի: Դատարանի դահլիճում նրա համախոհներն էին, զինակիցները, որոնք մասնակցել են արցախյան պատերազմին: Ինչեւէ, դատակոչված վկաների (թվով 9, 2-ը չէին ներկայացել) ցուցմունքներից պարզ դարձավ, որ «Անկախության բանակ» կազմակերպության (որի ղեկավարներից է Ա. Արշակյանը) անդամների ընկերական մի հավաքի ժամանակ, սեպտեմբերի 13-ին, ՆԳ աշխատակիցները ներխուժել են Գորվեցկա 4 հասցեում գտնվող տունը եւ ձերբակալել ներկաներին: Հաջորդ օրն իսկ վերջիններս ազատ են արձակվել: Արշակյանը, որը որպես գլխավոր մեղադրյալ մնացել է իրավապահների ձեռքում, տեղեկացրել է, թե այդ տարածքի փաստացի տերը վարձակալողներն են, նրանց էլ հանձնված է բանալին, իսկ ինքն այնտեղ տվյալ հարցում «առաջին դեմք չէ»: Տարածքը մինչեւ 2000 թ., իր մահվան տարեթիվը, տնօրինել է ազատամարտիկների ջոկատի նախկին հրամանատար Արթուր Մալխասյանը: Զենք-զինամթերքով լի սենյակի դուռը կողպված է եղել, այդ սենյակ ելումուտ չկար, այնպես որ Արշակյանը կարող էր եւ չիմանալ զենքի առկայության մասին: Սա վկաների ցուցմունքներով: Ինչ վերաբերում է իրեն ամբաստանյալին, ապա նա հետեւյալ մանրամասները հաղորդեց:

Երկարատեւ ու հուզական նախաբանին, որի ընթացքում ամբաստանյալը փորձում էր խորհրդանշական էլ զբաղվում էի այդ հարցերը կարգավորելով, անմիջականորեն առնչվում էի զենքի հետ կապված խնդիրներին, այդ պատճառով էլ միանգամից ճանաչեցի գտնված զենքը: Սակայն, կրկնում եմ, մենք այդ զենքը ՊՆ-ից չենք ստացել, եւ մեր ջոկատներն էլ մարտնչելիս եղած զենքի խմբաքանակն ամբողջությամբ չէին ծախսել...», պատմեց ամբաստանյալը: Այնուհետեւ նշեց, որ իր ձեռքին եղած զենքն ինքը հաստատման է ներկայացրել ՊՆ. մի քանի տարի, որը չէր հասցրել անել 2000-ին Մոսկվայից վերադարձած Արթուր Մալխասյանը: Այսպիսով, «Անկախության բանակի» անունից նրանք դիմել են ՊՆ, որպեսզի պատերազմից հետո անկիրառելի դարձած զենքի այդ մասն էլ հավաքի: «Հետո այդպես էլ չստացվեցի հավաքո՞ղ են, թե՞ ոչ», ասաց ամբաստանյալը: այնուհետեւ եզրակացնելով, որ հավաքում, այնուամենայնիվ, չի կատարվել: Ամբաստանյալը պնդում էր, թե զենքն առանց իր գիտության է բերվել Գորվեցկա փողոցում գտնվող այդ պահեստը:

Իր խոսքի ավարտին նա բազմիցս շեշտեց, որ նախաքննության ընթացքում քննիչներն իրեն որեւէ ճնշման եւ կոպիտ վերաբերմունքի չեն ենթարկել. շեշտադրումը հաստատված էր հատկապես լրատվամիջոցներին:

Մի քանի աղքատիկ հարցերը, որ մեղադրողն ուղղեց ամբաստանյալին, արդեն իսկ վկայում էին, որ Ազ. Թադեւոսյանն ամենեւին էլ «մարտականորեն» չի տրամադրված: Դատաքննությանն առհասարակ հարց չուղղեց ամբաստանյալին: Դատական նիստի ընթացքում ընթերցվեցին հոգուն ամբաստանյալի ուղղված միջնորդությունները Քրիստոնեա-դեմոկրատական միության (որի հիմնադիրն ու երբեմնի ղեկավարն էր Արշակյանը) եւ ԱԺ 12 պատգամավորների անունից (մինչեւ 1995-ը ամբաստանյալը եւս պատգամավոր էր): Միջնորդություններում հիշատակվում էր, որ Արշակյանը քաղաքական հարուստ անցյալ ունի, ինչը չի կարելի հաշվի չառնել: Դատաքննության ավարտին հնչեցին մեղադրող կողմի ու դատաքննության ճառերը, որոնք, պիտի նշենք, բովանդակային առումով միմյանց տարբերվում, եթե հաշվի չնստենք այն «մանրուքի» հետ, որ Ռ. Գրիգորյանն իր պաշտպանյալի լիակատար արդարացումն էր պահանջում, իսկ Ազ. Թադեւոսյանը, պնդելով 232 հոդվածի կիրառման իր պահանջը, առաջարկում էր վերոհիշյալ հոդվածի հանդեպ կիրառել քր. օր.-ի 41-րդ հոդվածը, այսինքն սահմանված պատժաչափը դարձնել զուտ պայմանական, փաստացի ազատազրկում չկիրառել: Մեղադրող կողմի այսօրինակ տեսակետի հիմնավորումը ծանրացուցիչ հանգամանքների բացակայությունն էր այս գործում: Նրա ճառը բուռն ծափահարություններով ընդունվեց Արշակյանի համախոհների կողմից: Ինչ վերաբերում է ամբաստանյալին, ապա նա այս անաչառ դատավարությունը կատակեց երկրում առկա առաջընթացի սաղմերի, դրական միտումների հետ, երախտագիտությամբ նշեց, որ «դատական համակարգն էլ, լրատվամիջոցներն էլ ներկայումս շատ ավելի լավն են, քան նախկինում»: Այսպիսով 41-րդ հոդվածը կիրառվեց, եւ ամբաստանյալը հենց դատարանի դահլիճից ազատ արձակվեց:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

«Կեցցե՞ մեր դատարանը, աշխարհի ամենաարդար դատարանը...»

Ազատ Արշակյանն ազատ է

Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում սկսվեց եւ նույն օրն իսկ ավարտվեց Ազատ Արշակյանի գործով դատավարությունը: Քանի որ ՀՀ գլխավոր դատախազությունը ներկայացնող Զելիմ Թադեւոսյանի մեղադրական ճառն ավելի շուտ հիշեցնում էր ճառ ի պաշտպանություն ամբաստանյալի, վերջինիս դատապաշտպան Ռոբերտ Գրիգորյանին գրեթե անելիք չէր մնում, եթե ոչ երկրորդել մեղադրող կողմին ու պահանջել Ազատ Արշակյանի արդարացումը: Դատավոր Ռուբեն Ներսիսյանին, բնականաբար, մնում էր լոկ բավարարել կողմերի առաջարկը հենց դատարանի դահլիճում ազատ արձակելով ամբաստանյալ Արշակյանին:



կայ տեսնել իր անվան եւ իր անհանգիստ ճակատագրի միջեւ, հաջորդեցին փաստերը: Հայտնաբերված զենք-զինամթերքն իրեն ծանոթ են. դրանք ժամանակին պատկանել են խորհրդային զինված ուժերին, ապա դարձել անկախացած Հայաստանի սեփականությունը, օգտագործվել արցախյան պատերազմում: «Մինչ ՊՆ կոչվող կառույցի ստեղծումը բավականին խառնաշփոթ վիճակ էր, քանի որ ազատամարտիկների ջոկատները չէին ուզում ենթարկված լինել ՀՀՇ-ին, ես էլ զբաղվում էի այդ հարցերը կարգավորելով, անմիջականորեն առնչվում էի զենքի հետ կապված խնդիրներին, այդ պատճառով էլ միանգամից ճանաչեցի գտնված զենքը: Սակայն, կրկնում եմ, մենք այդ զենքը ՊՆ-ից չենք ստացել, եւ մեր ջոկատներն էլ մարտնչելիս եղած զենքի խմբաքանակն ամբողջությամբ չէին ծախսել...», պատմեց ամբաստանյալը: Այնուհետեւ նշեց, որ իր ձեռքին եղած զենքն ինքը հաստատման է ներկայացրել ՊՆ. մի քանի տարի, որը չէր հասցրել անել 2000-ին Մոսկվայից վերադարձած Արթուր Մալխասյանը: Այսպիսով, «Անկախության բանակի» անունից նրանք դիմել են ՊՆ, որպեսզի պատերազմից հետո անկիրառելի դարձած զենքի այդ մասն էլ հավաքի: «Հետո այդպես էլ չստացվեցի հավաքո՞ղ են, թե՞ ոչ», ասաց ամբաստանյալը: այնուհետեւ եզրակացնելով, որ հավաքում, այնուամենայնիվ, չի կատարվել: Ամբաստանյալը պնդում էր, թե զենքն առանց իր գիտության է բերվել Գորվեցկա փողոցում գտնվող այդ պահեստը:

Իր խոսքի ավարտին նա բազմիցս շեշտեց, որ նախաքննության ընթացքում քննիչներն իրեն որեւէ ճնշման եւ կոպիտ վերաբերմունքի չեն ենթարկել. շեշտադրումը հաստատված էր հատկապես լրատվամիջոցներին:

Մի քանի աղքատիկ հարցերը, որ մեղադրողն ուղղեց ամբաստանյալին, արդեն իսկ վկայում էին, որ Ազ. Թադեւոսյանն ամենեւին էլ «մարտականորեն» չի տրամադրված: Դատաքննությանն առհասարակ հարց չուղղեց ամբաստանյալին: Դատական նիստի ընթացքում ընթերցվեցին հոգուն ամբաստանյալի ուղղված միջնորդությունները Քրիստոնեա-դեմոկրատական միության (որի հիմնադիրն ու երբեմնի ղեկավարն էր Արշակյանը) եւ ԱԺ 12 պատգամավորների անունից (մինչեւ 1995-ը ամբաստանյալը եւս պատգամավոր էր): Միջնորդություններում հիշատակվում էր, որ Արշակյանը քաղաքական հարուստ անցյալ ունի, ինչը չի կարելի հաշվի չառնել: Դատաքննության ավարտին հնչեցին մեղադրող կողմի ու դատաքննության ճառերը, որոնք, պիտի նշենք, բովանդակային առումով միմյանց տարբերվում, եթե հաշվի չնստենք այն «մանրուքի» հետ, որ Ռ. Գրիգորյանն իր պաշտպանյալի լիակատար արդարացումն էր պահանջում, իսկ Ազ. Թադեւոսյանը, պնդելով 232 հոդվածի կիրառման իր պահանջը, առաջարկում էր վերոհիշյալ հոդվածի հանդեպ կիրառել քր. օր.-ի 41-րդ հոդվածը, այսինքն սահմանված պատժաչափը դարձնել զուտ պայմանական, փաստացի ազատազրկում չկիրառել: Մեղադրող կողմի այսօրինակ տեսակետի հիմնավորումը ծանրացուցիչ հանգամանքների բացակայությունն էր այս գործում: Նրա ճառը բուռն ծափահարություններով ընդունվեց Արշակյանի համախոհների կողմից: Ինչ վերաբերում է ամբաստանյալին, ապա նա այս անաչառ դատավարությունը կատակեց երկրում առկա առաջընթացի սաղմերի, դրական միտումների հետ, երախտագիտությամբ նշեց, որ «դատական համակարգն էլ, լրատվամիջոցներն էլ ներկայումս շատ ավելի լավն են, քան նախկինում»: Այսպիսով 41-րդ հոդվածը կիրառվեց, եւ ամբաստանյալը հենց դատարանի դահլիճից ազատ արձակվեց:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

«Տնտեսական համագործակցությունից դժգոհ ենք»

Սկիզբը էջ 1

Այս հիմքի վրա տնտեսական փոխգործակցությունը խթանելու պատրաստակամություն հայտնելով՝ Հայաստանի նախագահը նշեց, թե հույս ունի, որ Ալ. Կվաշնեւսկուն ուղեկցող գործարարները կծանոթանան ՀՀ օրենսդրական դաշտին, կշփվեն հայ գործարարների հետ, ինչը կբերի համագործակցության:

Լեհաստանի նախագահն էլ ավելացրեց, թե միայն իր երկրի եւ Հայաստանի աշխարհագրական դիրքերն արդեն իսկ համագործակցության հսկայական հնարավորություն են ստեղծում՝ չխոսելով մյուս նպաստավոր գործոնների մասին:

«Մեզ երկուստեք պակասում է տեղեկատվությունը: Կաշխատենք, որ այս արգելքը վերանա ու չխանգարի այլեւս երկկողմ տնտեսական հարաբերություններին», հավաստեց Ալ. Կվաշնեւսկին: Նա նաեւ վստահեցրեց, թե մինչ իր այցի ավարտը ձեռք կբերվեն «հետաքրքրական եւ արդյունավետ ծրագրերի շուրջ պայմանավորվածություններ»:

Անշուշտ, մամլո ասուլիսին չշրջանցվեց ԼՂ հակամարտության թեման: Նախ Ռ. Քոչարյանը նշեց, որ հնչը խնդրի կարգավորման ներկա փուլը ներկայացրել է իր լեհ գործընկերոջը: Այնուհետեւ, պատասխանելով լեհ լրագրողի հարցին, թե սեպտեմբերի 11-ից հետո չե՞ն արագացվի տեղական հակամարտությունների լուծումները, որպեսզի աշխարհի ողջ ուժերը կենտրոնացվեն միջազգային ահաբեկչության դեմ պայքարում, Ռ. Քոչարյանը պատասխանեց. «Աշխարհն իսկապես փոխվել է, եւ այս համատեքստում տեղական կոնֆլիկտների լուծումն առանձնահատուկ տեղ ունի: Կարծում եմ, որ միջազգային հանրությունն այսուհետեւ առավել ակտիվ կմասնակցի դրանց լուծմանը»:

Ալ. Կվաշնեւսկին էլ Լեհաստանի պատրաստակամությունը հայտնեց խնդրի լուծմանն աջակցելու առումով:

Այսօր Լեհաստանի նախագահին, ինչպես նրան նախորդած բարձրաստիճան հյուրերին սպասում են հանդիպումներ ՀՀ ԱԺ-ում, ԵՊՀ-ում, այցելություն Ծիծեռնակաբերդ: Երկու նախագահների մասնակցությամբ կգումարվի նաեւ հայ-լեհական բիզնես ֆորում:

Նախագահներն այսօր կլինեն նաեւ Ռ. Քոչարյանի՝ Սեւանի նստավայրում: Ի դեպ, նրանք այսօր միասին նշելու են Լեհաստանի նախագահի ծննդյան տարեդարձը:

«ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»

Հայաստանում կավատությամբ զբաղվում են հիմնականում կանայք

ԵՐԵՎԱՆ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Կանանց եւ երեխաների անօրինական փոխադրումների խնդրին էր նվիրված «Կլոր սեղանը», որ անցկացվեց ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակում նոյեմբերի 14-ին: Քննարկմանը ներկա էին միջազգային կազմակերպությունների՝ ՄՄԿ, ԵԱՀԿ, ՄԱԿ, Հայաստանի պետական գերատեսչությունների ներկայացուցիչները եւ անհատ փորձագետներ: ՀՀ ՆԳՆ թմրաբիզնեսի եւ մարմնավաճառության դեմ պայքարի վարչության պետ Աշոտ Մկրտչյանը տեղեկացրեց, որ վերջին 4 տարիներին բեռնատար գործ է հարուցվել տարեկան 20-ական կավատների նկատմամբ: Սակայն, ըստ նրա, դա կանխարգելիչ հիմնական միջոց չէ, քանի որ դատապարտվելով ազատազրկման մի քանի ամիս՝ նրանք դուրս գալուց հետո շարունակում են իրենց «շահավետ բիզնեսը»: Ըստ նրա, նախ պետք է փոխվի տնտեսական իրավիճակը Հայաստանում, որպեսզի կավատները եւ մարմնավաճառները առավել ապահովված վիճակում չգտնվեն: Մկրտչյանը նաեւ նշեց, որ եթե ամբողջ աշխարհում կավատները տղամարդիկ են, ապա Հայաստանում այդ գործով զբաղվում են հիմնականում 2-3 երեխա ունեցող կանայք:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) առաքելության ղեկավար Նիլիմ Բարուան ներկայացրեց գրասենյակի պատրաստած «Կանանց եւ երեխաների անօրինական փոխադրումները Հայաստանի Հանրապետությունից» ուսումնասիրությունը: Փաստաթուղթը կազմելիս հարցվել են արտերկրից վերադարձած 59 կանայք, որոնցից 43-ը (73%) ապօրինի փոխադրումներից տուժածներ են եղել, նրանցից 28-ին մղել են մարմնավաճառության: Հարցմանը մասնակցածների մեծ մասը արտասահման ուղեւորությունը կազմակերպել է ծանոթների, ընկերների, հարեւանների ու բարեկամների, ինչպես նաեւ լրագրային գովազդների միջոցով: Ըստ Ն. Բարուայի, դեռեւս ուսումնասիրության կարիք ունեն միջնորդավորված ամուսնությունները այլ երկրների տարեց տղամարդկանց եւ երիտասարդ հայ կանանց միջեւ, գիշերային հասատություններում ապրող երեխաների վիճակը այդ հասատություններում եւ դրանցից դուրս գալուց հետո, ինչպես նաեւ արտերկրացիների կողմից հայ երեխաների որդեգրումը:

Հայաստանը վավերացրել է ապօրինի փոխադրումներին առնչվող վեց միջազգային իրավական փաստաթղթեր: Ու թեեւ ՀՀ օրենսդրությունը անդրադառնում է ապօրինի փոխադրումներին առնչվող իրավախախտումներին, սակայն, ըստ «Կլոր սեղանի» մասնակիցների, դա հետ պահող գործոն չէ ապօրինի փոխադրողների համար: Մինչ այժմ եղել է միայն մեկ մեղադրական ակտ, ու թեեւ տուժյալների շարքում եղել են անչափահասներ, ապօրինի փոխադրողները մեղմ պատժի են արժանացել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ

Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353

Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353

Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տոյգիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

Սպասվում է ռիսկային բյուջե

Ազգային ժողովը քննարկում է 2002-ի պետական բյուջեն

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը փորձում է հավատացնել, թե իրենց հաջորդ տարի կհաջողվի հարկերը հավաքել առավել բարձր ցուցանիշներով: Նրա այդ համոզվածությունն արտացոլվել է նաեւ 2002 թ. պետական բյուջեի նախագծում, ըստ որի նախատեսվում է հարկային մուտքերի ավելացում նախորդ տարվա համեմատ 27 մլրդ դրամով եւ կազմելու է 214,3 մլրդ դրամ: Նախարարը գտնում է, սակայն, որ հարկային գումարները պետք է բյուջե մուտքագրել վարչարարության խստացմամբ, որի նպատակով շատ շուտով, նախքան բյուջեի օրենքի ընդունումը, կառավարությունը ԱԺ-ի հաստատմանը կներկայացնի հարկային բարեփոխումների օրենսդրական փաթեթ, որը տնտեսվարող սուբյեկտների համար հարկային արտոնություններ կամ սահմանափակումներ չի նախատեսելու, այլ միայն վարչարարության ուժեղացում: ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը երեկ ԱԺ մշտական հանձնաժողովների բյուջեի քննարկման նպատակով հրավիրած համատեղ նիստի ժամանակ նշեց, որ այդ փաթեթի ընդունումն ընդգրկված է բյուջեի եկամտային մասում եւ որի կիրառումից նախատեսվում է մոտավորապես 15-20 մլրդ դրամի եկամուտ: Փաստորեն եթե փաթեթը չընդունվի կամ որոշակի փոփոխություններ կրի, 2002-ի բյուջեի նախագիծն անպայման ենթարկվելու է փոփոխության: Անդրադառնալով փաթեթին վարչապետը նշեց, որ փոփոխության ենթակա կարեւոր հարցերից մեկը տնտեսվարող սուբյեկտներում ստուգումներ անցկացնելուց 3 օր առաջ տեղեկացնելու դրույթի հանումն է, որը կառավարությունն առաջարկել էր դեռ նախորդ տարի, բայց չէր ընդունվել:



Հաջորդ տարվա բյուջեի ծախսային մասը նախատեսված 257,7 մլրդ դրամի սահմաններում է: Ըստ վարչապետի, դա հնարավոր այն սահմանն է, որը նախատեսվել է ծախսերի հնարավոր կրճատումների արդյունքում: Մասնավորապես դրա պատճառով է, որ առանձին ոլորտների համար նախատեսված ծախսերի չափերը գրեթե փոփոխություններ նախորդ տարվա համեմատությամբ չեն կրել:

Այսպես ամենաշատ գումարներ խժռող ոլորտը, ինչպես եւ սպասելի էր, պաշտպանության համակարգն է, որի համար նախատեսվել է 36,6 մլրդ դրամ: 17 մլրդ նախատեսված է հասարակական կարգի պաշտպանության, ազգային անվտանգության եւ դատական համակարգի մասով, 29,2 մլրդ կրթության եւ գիտության, 16 մլրդ առողջապահության եւ 27 մլրդ սոցիալական ապահովության ոլորտներում: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել կրթության ոլորտը, քանի որ բյուջեի նախագծով կառավարությունը ծրագրել է 20 տոկոսով ավելացնել ուսուցիչների աշխատավարձը: 300 մլն դրամ նախատեսվել է դպրոցաշինության համար: Որոշակի փոփոխություններ են նախատեսվել նաեւ առողջապահության համակարգում, որտեղ օպտիմալացիայի շրջանակներում որոշակի կրճատումներ են սպասվում: Ի տարբերություն նախկին մեթոդների, այս տարի պետպատվերով սահմանվում են մի քանի հիվանդություններ, որոնք հիվանդանոցները պարտավոր են բուժել անվճար: Ինչպես վարչապետը տեղեկացրեց, այս տարի որոշակի ուշադրություն է դարձվելու առողջապահության համակարգի աշխատավարձերի տրամադրմանը: Եվ որպեսզի առողջապահական հիմնարկները բյուջեից ստացած գումարներն ուղղեն առաջին հերթին աշխատավարձերին, նրանց հետ թարմացվելու են համապատասխան պայմանագրերը:

ԱԺ-ի ընդունած մի քանի օրենքները, որոնք բյուջեի ծախսային մասում ավելացումներ էին նախատեսում, 2002 թ.-ից չեն ֆինանսավորվի: Վարչապետի տվյալներով, եթե այդ օրենքներում համապատասխան փոփոխությունները չկատարվեն, իրենք հարկադրված կլինեն մոտ 10 մլրդ դրամով ավելացնել բյուջեի դեֆիցիտը, որը հիմա կազմում է 43,4 մլրդ դրամ: Դրանք են Սեւանի, սահմանամերձ բնակավայրերի մասին եւ այլ օրենքներ:

Նախատեսվում են պետական պարտքի ծախսերի կրճատումներ, որոնք տեղի կունենան եւ համակարգում աշխատողների կրճատումների տեսքով, եւ հեռախոսային ծախսերի մասով, եւ տեղական գործուղումների կրճատմամբ:

Հատկանշական է, որ բոլոր նախագծով սահմանված չէ, ինչը նշանակում է, որ կառավարությունը 2002-ի կտրվածքով դրա կիրառում չի նախատեսում: Փոխարենն ընդգրկված են Համաշխարհային բանկից ստացվող ՍԱՔ վարկաբաժինները: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը տեղեկացրեց, որ մասնավորապես ՍԱՔ-5 մասնաբաժինն իրենք ստացում են տարվա կեսին, ուստի ծախսային մասում այն ուղղված է պարտքերի մարմանը, որպեսզի հետագայում հավելյալ պարտքեր չկուտակվեն:

Անկախ ամեն ինչից, նկատելի է, որ 2002 թ.-ի բյուջեի դեֆիցիտը գրեթե մնացել է նույն մակարդակին: 43,4 մլրդ-ի ծեղքվածքը կառավարությունը նախատեսում է փակել ներքին աղբյուրներից՝ պետական արժեթղթերի մասնավորեցմամբ՝ 3,5 մլրդ դրամ, եւ արտաքին աղբյուրներից՝ 38 մլրդ դրամի չափով: Այդ գումարներն ակնկալվում են միջազգային կազմակերպություններից՝ 33,5 մլրդ եւ օտարերկրյա պետություններից ստացվող միջոցներից:

Ինչեւէ, ակնհայտ է, որ եկող տարվա բյուջեն բավականին ռիսկային է եկամտային մասով, որտեղ նախատեսվում է հարկային մուտքերի ավելացում: Այս տարի ՀՆԱ-ում հարկերի հավաքումը արտացոլվել է 14,8 տոկոսային մասով: Եկող տարի կառավարությունը նախատեսում է 15,5 տոկոս, թեեւ չեն նշվում այդ ցուցանիշին հասնելու մեխանիզմները: Վարդան Խաչատրյանը համոզված է, որ հաջորդ տարի կարձանագրվի 7,5 տոկոս տնտեսական աճ: Այս տարվա 9 տոկոս աճի փոխարեն ավելի փոքր նախատեսումը նա բացատրեց կառավարության ռիսկի չգնալու տրամադրվածությամբ եւ աշխարհում նկատվող տնտեսական աճի նվազման միտումով: Ամեն դեպքում, իրավիճակը ծախսային մասում կարելի կլիներ փոփոխել, եթե էներգետիկ ոլորտը կարողանար վճարել կուտակված պարտքերը: Միայն ատոմակայանի չաշխատելու պատճառով յուրաքանչյուր օր 3 մլն դրամ բյուջեն հարկադրված է վճարել դրսից ստացվող գազի դիմաց:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Խնայվել է մոտ 1 մլն դոլար

Արշանագրում է պետական գնումների գործակալության պետը

Մեկ տարի առաջ, համաշխարհային օրենքի ընդունումից հետո, ստեղծվեց պետական գնումների գործակալությունը: Այդ ընթացքում վերջինս հասցրեց ղեկավար փոխել: Գործակալության առաջին պետի՝ Չարեհ Սարգսյանի պաշտոնանկությունից հետո այդ պաշտոնում նշանակվեց մինչ այդ ԱԺ պատգամավոր Գագիկ Խաչատրյանը: Նա էլ կառույցի աշխատանքների արդյունքների ամփոփման նպատակով երեկ մամուլի ասուլիս էր հրավիրել:

Գործակալության պետը կարեւորեց բյուջեի ծախսային մասի արդյունավետ իրագործումը, նշելով, որ հավաքված միջոցների 50 տոկոսը ծախսվում է գնումների համար: Իսկ գործակալությունն իրականացրել է բյուջեով նախատեսված գնումների 5 տոկոսը: Մեկ տարվա ընթացքում հայտարարվել է աշխատանքների, ապրանքների եւ ծառայությունների գնման 150 մրցույթ՝ 6,8 մլրդ դրամ նախահաշվային արժեքով: Մրցույթներին մասնակցելու համար ներկայացված հայտերի թիվը 550-ից ավելի է եղել: Յուրաքանչյուր մրցույթին եղել է միջին հաշվով 6-7 մասնակից: Առանձին դեպքերում այդ թիվը հասել է մինչեւ 15-ի: Անցած մեկ տարվա ընթացքում, կենտրոնացված գնումների շնորհիվ, խնայվել է 550 մլն դրամ կամ մոտ 1 մլն դոլար: Որպես առավել հաջող օրինակ Գագիկ Խաչատրյանը մատնանշեց գյուղատնտեսության նախարարության համար դրենաժային ցանցերի նորոգման մրցույթը, որտեղ 300 մլն դրամից 140 մլն դրամը խնայվեց: Նա տեղեկացրեց, որ 2002 թ. պետական միջոցների հաշվին բուժապահովագրումը եւս կիրականացվի պետական գնումների գործակալության միջոցով: Գործակալության պետը ընդունեց, որ խնդիրներ առաջանում են, սակայն, ըստ նրա, օրենքը թույլ է տալիս դրանք կարգավորել: Օրինակ՝ եթե մրցույթը տեղի չի ունենում, ինչպես եղավ բենզինի դեպքում, գործում է մեկ աղբյուրից գնման կարգը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու գործակալությունն իրականացրել է ընդհանուր գնումների ընդամենը 5 տոկոսը, Գագիկ Խաչատրյանը երկու հիմնական պատճառ նշեց: Առաջին՝ գործակալությունը նոր էր ստեղծվել եւ պատրաստ չէր մեծ ծավալներով գնումներ կատարելու, երկրորդ՝ հայտերի ներկայացումը ձգձգվում էր հայտատուների պատճառով: «Ազգի» հարցին, թե արդյոք նույնը չի՞ կրկնվի հաջորդ մեկ տարվա ընթացքում, գործակալության պետը պատասխանեց, որ դա թույլ չտալու համար մտցվել է պարբերական մրցույթների կարգ, որտեղ մի քանի ապրանքների (բենզին, թուղթ եւ այլն) համար մրցույթներ կանցկացվեն ոչ միայն 2002 թ., այլեւ 2003 թ. համար: Բացի դրանից, մեկ աղբյուրից գնումների կարգն է օգտագործվելու: Որոշակի պատասխան չստանալով, Գագիկ Խաչատրյանից փորձեցինք տեղեկանալ, թե գումարային առումով 2002 թ. պետական գնումները որքան կկազմեն, եւ խնայողության ի՞նչ կանխատեսումներ կան: Ի պատասխան պետական գնումների գործակալության պետը կարծիք հայտնեց, որ լավագույն աշխատանքի դեպքում պետք է որոշ ժամանակ հետո հասնել նրան, որ խնայողությունները նվազեն: Այսինքն՝ ապրանքների եւ ծառայությունների գնման գները մոտենան տուկայականին: Ինչ վերաբերում է գումարային արտահայտությանը, ապա նա հույս հայտնեց, որ 2002 թ. իրենք կկատարեն 15-20 մլրդ դրամի գնումներ, իսկ խնայողությունը կկազմի 3-5 տոկոս:

Գագիկ Խաչատրյանը տեղեկացրեց նաեւ, որ համաձայն օրենքում կատարված փոփոխության՝ սահմանվել է նվազագույն շեմ, որից ցածր գնումների իրականացումը պետք է կատարեն ձեռնարկությունները: Նախապես այդ շեմը եղել է 250 հազար դրամ, սակայն արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունն առաջարկել եւ ընդունել է 750 հազար դրամ:

Ասուլիսի վերջում Գագիկ Խաչատրյանն առաջարկեց, որ միջազգային ֆինանսական կազմակերպությունների իրականացրած ծրագրերի համար գնումների մրցույթները եւս անցկացվեն գործակալությունում: Ներկայումս գնումները կատարում են ծրագրերի իրագործման գրասենյակները (ԾԻԳ): Հետաքրքիր է Համաշխարհային բանկի արձագանքն այդ առաջարկի կապակցությամբ, որին, կարծում ենք, երկար չենք սպասի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԵՂԾԻՔ

Կեղծ դեղեր տուկայում

ԵՐԵՎԱՆ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ առողջապահության նախարարության «Դեղագործակալություն» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ դեղագործական տուկայում հայտնաբերվել են Ռուսաստանի «Բրինցալով Ա» արտադրության «Ցեֆազոլին» (սերիա 34032000) եւ Կուրգան քաղաքի «Սինթեզ» գործարանի արտադրության «Էրիթրոմիցին» (սերիա 390299 եւ 4042001) դեղերը, որոնք կեղծված են. առաջինը ցեֆազոլինի փոխարեն պարունակում է բենզիլպենիցիլին, իսկ երկրորդը չունի հակաբակտերիալ ակտիվություն: Նշված դեղերը գրանցված չեն ՀՀ-ում եւ ներմուծվել են անօրինական ճանապարհով: Խնդրվում է զերծ մնալ նշված դեղերի օգտագործումից, ինչպես նաեւ դեղեր չգնել տուկաների եւ տնավաճառների տարածքներում շրջող դեղավաճառներից:

«Քցվող Ռուզանիկը» եւ արդի զարգացումը

Նախկինում հեռուստատեսությունում պայմանագրային կարգով մեկ-մեկ ելույթ ունեցող Ռուզան Խաչատրյանի կյանքը, այնուամենայնիվ, չկայացավ:

1988-ին ՀՀՇ նրան չվերցրեցին: Թե չէ՝ իր տվյալներով փողոցային ժարգոնով, սուտ ասելու, հետո վերջինս պնդելու ընդունակությամբ, իրեն անդավաճան եւ սկզբունքային ձեւացնելու կարողությամբ անգուգական կլիներ ՀՀՇ-ական ԲՏՈ-ների մեջ:

Բայց ոչինչ: Ժամանակն ասպարեզ բերեց ՀԺԿ-ին, իսկ դրա հետ Ռուզան Խաչատրյանին եւ մի շարք ուրիշ Խաչատրյանների...

Մենք իրոպես չգիտենք, թե ինչ թափ ու կշիռ ունի տկն Ռուզանը ՀԺԿ-ում, ավելի ճիշտ այն բանում, ինչ մնացել է սույն կազմակերպությունից այսօր: Ենթադրում ենք, որ գլխավոր գաղափարախոսն է: Նամանավանդ որ այդ կազմակերպությունը գաղափարախոսություն ունի՝ որ թե չունի: Դրա համար էլ տիկինը, օգտագործելով իրեն շատ հոգեհարազատ եւ հոգենտ «Հայկական ժամանակը», պարբերաբար կեղծիք ու սուտ է տարածում բոլոր նրանց դեմ, ովքեր քննադատում են նախկիններին եւ պաշտպանում ներկաներին: Դե, ինչ արած, Ռուզանի կուսակցության քաղաքական գիծն է: Բայց ինչո՞ւ ասել: Ամիսներ առաջ, հիմք ընդունելով «Հայկական ժամանակի» մի հրապարակում, այդ տիկինն իրենց ՀԺԿ-ական հավաքներից մեկում հրապարակավ ասեց, որ ՀՈԱԿ X համագումարում իբր թե հոկտեմբերի 27-ի ոճրագործության կապակցությամբ ոչ թույլատրելի արտահայտություններ են եղել: Սույն հավաքի որոշ մասնակիցներ (որոնք «ակտիվ» զբաղվում են քաղաքականությամբ, բայց ոչ թերթ են կարդում, ոչ էլ ուրիշ բան) սկսեցին բուռն քննարկել այդ սուտը եւ հայտարարություններ անել հենց նույն «Հայկական ժամանակի» եւ նախկինների այլ ՁԼՄ-ների համար:

Հիմա, ՀԺԿ-ի «երկաթյա լեդին» (ներող եղեք, տիկին Խուդաբաշյան, Ռուզանիկը «երկաթյա լեդի» թիվ 2/0 է) կրկին «Հայկական ժամանակում» փորձում է զրպարտել ՀՈԱԿ-ին եւ նրա ղեկավարներին:

Ուրեմն այսպես, տիկին «հավատարիմ», առաջինը «քցող» կուսակցություններ, այն էլ ավանդական, չեն եղել եւ չկան, կան քցվող ռուզանիկներ, եղել են եւ, ավաղ, կլինեն: Երկրորդ 1996-ին ՀՈԱԿ-ում տեղի է ունեցել ղեկավարի փոփոխություն: Երրորդը՝ միշտ էդպես թասիբին կանգնիր նախկին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, Վանոյի, նմաններիդ՝ Շողեր Մաթեւոսյանի, Աննա Իսրայելյանի եւ մյուս կարգի «սրբուհիների»:

ԳԱՌՆԻԿ ՀՈՎՍԵՓԻՄՅԱՆ

Գնացողն ու մնացողը

Թերեւս նորություն չենք ասի, եթե նշենք, որ մեր ազգին հատուկ է աշխարհի ամենատարբեր երկրներում բնակություն հաստատելու (չնայած այդ երկրների մշակութային, քաղաքական կամ կրոնական առանձնահատկություններին), այնտեղ արմատներ գցելու եւ վերջնականապես հաստատվելու սովորությունը: Հայտնի է նաեւ, որ առաջին հայերը, որոնք վաղ միջնադարում հաստատվել են Եվրոպայում կամ մեր երկրագնդի այլ աշխարհամասերում, առեւտրականներն են եղել:

Իսկ ի՞նչ պայմաններում են ապրում մեր քաղաքացիներն արտասահմանում, ինչպե՞ս են հայթայթում օրվա հացը: Բազմիցս առիթ ունենալով հանդիպելու եւ զրուցելու Արեւմտյան Եվրոպայում գտնվող մեր հայրենակիցների հետ ինչ-որ չափով տեղյակ եմ նրանց կենսակերպին:

Ինչպես հայտնի է, եվրոպական զարգացած երկրներում աշխատանքի եւ բնակության թույլտվություն ստանալը բավականին բարդ, եթե չասենք անհնարին գործընթաց է: Մեր քաղաքացիները, ժամանակավոր տնտեսական դժվարությունների պատճառով երկիրը լքած հայ քաղաքացիների դիմումներին, դրանք նույնպես մերժվում են, քանի որ տնտեսական ծանր իրավիճակը բավարար հիմք չէ Եվրոպայում բնակության թույլտվություն ստանալու համար: Տխուր փաստ է, որ քաղաքական ապաստան ստանալու համար մարդիկ դիմում են ծայրահեղ միջոցների. այդ երբվանի՞ց հայ ավանդապաշտ տղամարդը դարձավ արվամոլ եւ, դեմքին համոզիչ արտահայտություն տալով, սկսեց հավատացնել օտար չինովնիկին, որ Հայաստանում իրեն ճնշում են, քանի որ ինքը սեռական փոքրամասնության է պատկանում: Կամ ինչպե՞ս է կարողանում փոխել իր դեմքն ու ազգը ներկայանալով որպես ադրբեջանցի, փոխելով ազգանունն ու սերտելով ադրբեջաներեն մի քանի բառ՝ առավել համոզիչ երեւալու համար:

Մինչ իրենց ներկայացրած դիմումների քննարկման ավարտը մեր քաղաքացիները բնակվում են ժամանակավոր կացարաններում եւ էմիգրացիոն ճամբարներում: Չունենալով աշխատանք եւ ապրուստի միջոցներ, սոցիալական ապահովության գրասենյակներից ստանալով չնչին նպաստներ, նրանցից շատերը փնտրում են գումար հայթայթելու այլ միջոցներ: Հատկապես աթելու այլ միջոցներ: Հաստատես աթելու այլ միջոցներ: Հաստատես ազգանց ընտանիքի կամ զինվորական ծառայությունից խուսափող երիտասարդները կարող են հաստատում ԱՊՀ այլ երկրներից ժամանած եւ առանց բնակության թույլտվության անձանց հետ եւ, կազմելով խմբեր, դիմում են գողության, ինչպես նաեւ զերծ չեն մնում թմրանյութեր օգտագործելուց եւ դրանց վաճառքից: Ցավոք, պետք է ասեմ, որ կանայք նույնպես հետ չեն մնում նման քայլերից: Հիշում եմ, զրուցում էի մի կնոջ հետ, որը հանդիպանութում գողություն էր արել եւ որոշ ժամանակ անցկացրել բանտում: Իմ այն հարցին, թե նա Հայաստանում հավանաբար չէր դիմի նման քայլի, պատասխանեց. «Ի՞նչ եք ասում, ես Հայաստանում ինձ ենք էի»:

Հայաստանում ապրելու միջ թե շատ նորմալ պայմաններ ունեցող շատ ընտանիքներ թողնում են ամեն ինչ, վաճառում իրենց բնակարանները՝ այդ գումարով անօրինական ճանապարհով Եվրոպա թափանցելու համար: Աշխատանք գտնելու մեծ հույսերով ժամանելով այստեղ՝ շատ շուտով հասկանում են իրականությունը եւ հայտնվում կատարված փաստի առջեւ: Ցավոք, հետ դառնալու ճանապարհ չկա, քանի որ վաճառել են բնակարանները, շատերը պարտքեր ունեն եւ այլն: Կուրորեն ենթարկվելով այս կամ այն երկրում շահավետ աշխատանք, ապրուստի միջոցներ եւ այլն ունենալու վերաբերյալ հարեւան-ծանոթների հորինածին պատմություններին, մարդիկ հայտնվում են անելանելի վիճակում՝ վտանգելով իրենց եւ իրենց երեխաների բնականոն կյանքը:

Անցնելով մի երկրից մյուսը՝ նրանք մշտապես զգնվում են հոգեկան անհանգիստ վիճակում՝ գիտակցելով, որ ամեն պահ կարող են վտարվել տվյալ երկրի իշխանությունների կողմից: Հաճախ եմ լսել, թե ինչպես են պատմում, որ վաղ առավոտյան ոստիկանները ներխուժում են իրենց ժամանակավոր կացարանները, խուզարկում ողջ բնակարանը եւ իրենց, այդ ամենն անում են կոպտորեն եւ բղավելով՝ վախեցնելով ճնած երեխաներին:

Մի՞թե ապրելու այդ եղանակը ավելի բարեկեցիկ է դարձնում եւ ապահովում երեխայի կյանքը: Չէ՞ որ նա հաճախ ստիպված է լինում փոխել իր միջավայրը, «փախչել» ծնողների հետ մի երկրից մյուսը՝ մշտապես զգալով անկոչ հյուրի դերը: Իսկ ի՞նչ կրթություն է ստանում նա: Կյանքը տեղվում է իր բնական ռիթմից, երեխան հետ է վարժվում ուսանելու իր պարտականությունից՝ դրա հետ մեկտեղ կորցնելով նորմալ ապագա ունենալու իր հնարավորությունները:

Այս ամենի մեջ մտահոգողն այն է, որ արտասահմանում այսպես ապրող մեր բոլոր քաղաքացիները գիտակցում են իրենց վիճակի ողջ դժբախտությունը, սակայն ժամանակի հետ հաշտվում, որդեգրում են այդ կենսակերպը՝ իրենք էլ չզգալով, որ անտարբեր են դառնում իրենց երեխաների եւ իրենց իսկ ապագայի հանդեպ: Խաթարված ճակատագրեր:

Հ. Գ. Հոդվածիս նպատակը չէ դատել մարդկանց, պարզապես կուզենայի մի պահ մտորելու հնարավորություն տալ ճամբարները կազմած բոլոր նրանց, ովքեր մտադիր են մեկնել դեպի մշուշոտ անորոշություն:

ԷՄՄԱ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն օտարերկրյա փնտրտուքներում

Նրանք, ինտեգրվելով այս երկրներում, այնուհանդերձ պահպանել են իրենց ազգային ինքնությունը, լեզուն, կրոնը՝ իրենց հերթին հարստացնելով եւ զանազան դարձնելով տվյալ երկրի մշակույթն ու կոլորիտը: Հայերի այս ձգտումը դեռի օտար երկրներ մեծապես պայմանավորված է եղել նաեւ հարյուրամյակներ շարունակ հայկական պետականության բացակայությամբ, ինչպես նաեւ օտարի մտրակից փախչելու ենթագիտակցական մղումով:

Այսօր փոխվել է իրադրությունը, պատմությունը նոր ընթացք է ստացել. Հայաստանը ձեռք է բերել երկար սպասված անկախությունը: Սակայն ժողովրդի մեջ դեռեւս չի ամրապնդվել մեծ հոգ-հայրենիքպետություն սեփականության պահպանման գիտակցությունը: Այսօր մեծ չափերի է հասնում մեր քաղաքացիների հոսքը դեպի արտերկրներ: Հասկանալի է, որ մեր հանրապետությունը ծանր տնտեսական իրավիճակում է, եւ շատ այլ խնդիրներ կան, որոնք կարող են հուսահատեցնող թվալ: Սակայն մի ճշմարտություն կա. ոչինչ հարատեւ չէ, եւ լավ ու վատ իրավիճակները հաջորդում են միմյանց, իսկ ժամանակը դրան նպաստող ամենահզոր միջոցն է:

Եվրոպա, դիմում են համապատասխան իշխանություններին՝ քաղաքական ապաստան ստանալու խնդրանքով: Հայաստանը եվրոպական իշխանությունների կողմից համարվում է մի երկիր, որտեղ մարդու իրավունքների ոտնահարման հատուկ դեպքեր չեն գրանցվում: Հետեւաբար քաղաքական ապաստան խնդրող բոլոր հայերը մերժվում են՝ որքան էլ ներկայացնեն հորինված, խիստ գույներով հագեցած դիմումներ: Ինչ վերաբերում է Հայաստանում իրեն ճնշում են, քանի որ ինքը սեռական փոքրամասնության է պատկանում: Կամ ինչպե՞ս է կարողանում փոխել իր դեմքն ու ազգը՝ ներկայանալով որպես ադրբեջանցի, փոխելով ազգանունն ու սերտելով ադրբեջաներեն մի քանի բառ՝ առավել համոզիչ երեւալու համար:

Մինչ իրենց ներկայացրած դիմումների քննարկման ավարտը մեր քաղաքացիները բնակվում են ժամանակավոր կացարաններում եւ էմիգրացիոն ճամբարներում: Չունենալով աշխատանք եւ ապրուստի միջոցներ, սոցիալական ապահովության գրասենյակներից ստանալով չնչին նպաստներ, նրանցից շատերը փնտրում են գումար հայթայթելու այլ միջոցներ: Հատկապես աթելու այլ միջոցներ: Հաստատես ազգանց ընտանիքի կամ զինվորական ծառայությունից խուսափող երիտասարդները կարող են հաստատում ԱՊՀ այլ երկրներից ժամանած եւ առանց բնակության թույլտվության անձանց հետ եւ, կազմելով խմբեր, դիմում են գողության, ինչպես նաեւ զերծ չեն մնում թմրանյութեր օգտագործելուց եւ դրանց վաճառքից: Ցավոք, պետք է ասեմ, որ կանայք նույնպես հետ չեն մնում նման քայլերից: Հիշում եմ, զրուցում էի մի կնոջ հետ, որը հանդիպանութում գողություն էր արել եւ որոշ ժամանակ անցկացրել բանտում: Իմ այն հարցին, թե նա Հայաստանում հավանաբար չէր դիմի նման քայլի, պատասխանեց. «Ի՞նչ եք ասում, ես Հայաստանում ինձ ենք էի»:

Հայաստանում ապրելու միջ թե շատ նորմալ պայմաններ ունեցող շատ ընտանիքներ թողնում են ամեն ինչ, վաճառում իրենց բնակարանները՝ այդ գումարով անօրինական ճանապարհով Եվրոպա թափանցելու համար: Աշխատանք գտնելու մեծ հույսերով ժամանելով այստեղ՝ շատ շուտով հասկանում են իրականությունը եւ հայտնվում կատարված փաստի առջեւ: Ցավոք, հետ դառնալու ճանապարհ չկա, քանի որ վաճառել են բնակարանները, շատերը պարտքեր ունեն եւ այլն: Կուրորեն ենթարկվելով այս կամ այն երկրում շահավետ աշխատանք, ապրուստի միջոցներ եւ այլն ունենալու վերաբերյալ հարեւան-ծանոթների հորինածին պատմություններին, մարդիկ հայտնվում են անելանելի վիճակում՝ վտանգելով իրենց եւ իրենց երեխաների բնականոն կյանքը:

Անցնելով մի երկրից մյուսը՝ նրանք մշտապես զգնվում են հոգեկան անհանգիստ վիճակում՝ գիտակցելով, որ ամեն պահ կարող են վտարվել տվյալ երկրի իշխանությունների կողմից: Հաճախ եմ լսել, թե ինչպես են պատմում, որ վաղ առավոտյան՝ ոստիկանները ներխուժում են իրենց ժամանակավոր կացարանները, խուզարկում ողջ բնակարանը եւ իրենց, այդ ամենն անում են կոպտորեն եւ բղավելով՝ վախեցնելով ճնած երեխաներին:

Մի՞թե ապրելու այդ եղանակը ավելի բարեկեցիկ է դարձնում եւ ապահովում երեխայի կյանքը: Չէ՞ որ նա հաճախ ստիպված է լինում փոխել իր միջավայրը, «փախչել» ծնողների հետ մի երկրից մյուսը՝ մշտապես զգալով անկոչ հյուրի դերը: Իսկ ի՞նչ կրթություն է ստանում նա: Կյանքը տեղվում է իր բնական ռիթմից, երեխան հետ է վարժվում ուսանելու իր պարտականությունից՝ դրա հետ մեկտեղ կորցնելով նորմալ ապագա ունենալու իր հնարավորությունները:

Այս ամենի մեջ մտահոգողն այն է, որ արտասահմանում այսպես ապրող մեր բոլոր քաղաքացիները գիտակցում են իրենց վիճակի ողջ դժբախտությունը, սակայն ժամանակի հետ հաշտվում, որդեգրում են այդ կենսակերպը՝ իրենք էլ չզգալով, որ անտարբեր են դառնում իրենց երեխաների եւ իրենց իսկ ապագայի հանդեպ: Խաթարված ճակատագրեր:

Հ. Գ. Հոդվածիս նպատակը չէ դատել մարդկանց, պարզապես կուզենայի մի պահ մտորելու հնարավորություն տալ ճամբարները կազմած բոլոր նրանց, ովքեր մտադիր են մեկնել դեպի մշուշոտ անորոշություն:

ԷՄՄԱ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համբերատար հողն ու նեղացած հողագործը

1993 թ. ավարտվեց հողն ամբողջովին սեփականաշնորհելու գործընթացը: Սեփականաշնորհվեցին էջմիածնի նախկին շրջկենտրոնի տնտեսության 1360 հա վարելահողը, 700 հա խաղողի, 80 հեկտար պտղատու ծառերի այգիները, մեխանիզատորական պարկը, անասնապահական ֆերման: 2680 տնտեսություններ դարձան հողի սեփականատերեր: Ցավոք, 8 տարիների ընթացքում թե ինչպիսի ավերածություններ կատարվեցին հողագործության մեջ, անպատասխանատվությունն ինչ չափերի հասավ, ինչպես հողն ու հողագործը մատնվեցին անուշադրության, հայտնի է բոլորին: Բոլորին նաեւ պարզ է մի շատ տարրական ճշմարտություն, որ ամեն մի բարեկեցության, ամեն մի հաջողության հիմքն աշխատանքն է: Դա հայտնի է ե՛ւ թագավորին, ե՛ւ շինականին: Սակայն անկախություն ու սեփականաշնորհում ընծայողները, պետության նոր տիպ ստեղծողները, հողի հարցեր չափ ու ձեւ ավարտելուց հետո ձեռքերը լվացին՝ գյուղացի, հողն անհատույց քեզ ենք տվել, գնա եւ հոգատար հոգա, մենք այլեւս անելիք չունենք: Ասացին եւ իրենց խոսքին էլ մնացին: «Մենք ավելի կարեւոր գործեր ունենք, հացի խնդիրն ի՞նչ է որ», պատասխանեցին վերեւներում: Եվ ահա մոռացված հողի եւ նեղացած հողագործի պատկերը:

Հսկայական հողատարածքներ զբաղեցնող տնտեսության հողի վարձի գանձման, ոռոգման ջրի բաշխման եւ հողագործի հետ առնչվող բազմաթիսի խնդիրներով 1993-97 թթ. զբաղվել է ինչ-որ մի կոոպերատիվ (նախագահ՝ Ջիվան Սարգսյան): Փաստաթղթային, հողօգտագործման, հողի եւ ոռոգման ջրի վարձերի թերի գանձման եւ այլ թերություններով ու քաոսային վիճակով հանձնվել է այն քաղաքաթեատրանի ընդհանուր բաժնին, ուղղակի զարմանում ես՝ քաղաքաթեատրանը իբր շատ է կարողանում իր քաղաքի բազում խնդիրները լուծել, հիմա էլ պետք է զբաղվի հողագործությամբ: Այսինքն՝ սա նորություն չէ, այսպիսի հում ու աննպատակ որոշումներ մեր կյանքում որքան ուզեք առկա են:

Զրուցում եմ քաղաքաթեատրանի ընդհանուր բաժնի տնօրեն Ավետիս Ավետիսյանի հետ: Մեր զրույցին մեկ-մեկ էլ միջամտում է բաժնի մասնագետ Սիրանուշ Եղոյանը: Ըստ ներկայացրած փաստաթղթերի՝ այս տարի 950 հա հացահատիկի դաշտերի յուրաքանչյուր հեկտարից ստացվել է ընդամենը 25 ցենտներ բերք՝ խորհրդային տարիների 45-50 ցենտների դիմաց: 450 հա խաղողի այգիներից միջինը ստացվել է 30ց, նախկին 70-80 ցենտների փոխարեն: Ցածր բերքատվությունը դեռ ներելի է: Ինչպես հասկանալ այն իրողությունը, որ 176 հա վարելահող առհասարակ չի մշակվում: Սոցիալական ու տնտեսական այս ծանր պայմաններում Արարատյան դաշտի սրտում հարյուրավոր հա վարելահողեր մնում են ամուլ ու մոռացված, տաստակապատ ու անջրդի: «Թեղուտ» կոչվող հանդամասում 150 հա հողատարածք 8 տարի չի մշակվում՝ ոռոգման ջրի բացակայության պատճառով: Սակայն եղել են մարդիկ, որոնք իրենց նախաձեռնությամբ վերագործարկել են խափանված խորքային հորերը եւ տասնյակ հեկտարներ առանց ձեւակերպման մշակում են, ստանում եկամուտներ՝ պետությանը վարձ չվճարելով: Հողատարածքներ էլ կան, որոնց սեփականատերերը վաղուց հեռացել են հանրապետությունից: Կամ դրանք մնում են անմշակ, կամ մշակում են անհայտ մարդիկ: Սեփականաշնորհված տարածքների ոռոգման ջրի հողավարձի պարտքը մոտ 90 մլն է: Վիթխարի պարտքեր առկա են Արմավիրի մարզի գրեթե բոլոր տնտեսություններում: Իսկ բյուջեն ճեղքվածք է տալիս...

«Պետականորեն 5 տարին մեկ գյուղնախարարության հատուկ հանձնաժողովների միջոցով ճշտվում է հողակարգը: 1996 թ. «Հիդրոպրոեկտ» ինստիտուտի մասնագիտական հանձնաժողովը մեզ մոտ անցկացրեց այդ միջոցառումը: Չգիտես ինչու, բոլոր հողակտորների կարգերը բարձրացվեցին, որն ամբողջովին չի համապատասխանում իրականությանը: Հողատերերի բազում բողոքները մնացին անհետեւանք, այստեղից էլ սկսվեցին դժգոհություններն ու պարտքերի առավել կուտակումները, ասում է Ավետիսյանը, առանց այն էլ ոռոգման ջրի, հողավարձի չափերը բարձր են: Եվ այս դժվարությունների, բազում խնդիրների առկայության պայմաններում, գյուղատնտեսությամբ մեզ մոտ զբաղվում են 2-3 աշխատողներ: Գյուղացուն մասնագիտական ոչ մի օգնություն ցույց չի տրվում: Նա երբեմն այգին կամ բանջարանոցը բուժում է ժամկետանց կամ անհամապատասխան բուժանյութերով ու ընկնում անելանելի վիճակի մեջ, որովհետեւ մասնագետ գյուղատնտես չունենք: Ոչ մի կերպ չի լուծվում ոռոգման ջրի խնդիրը: Եթե նախկինում մի քանի տասնյակ ջրվորներ ժամանակին ոռոգում էին բոլոր հողատարածքները, այդ այսօրվա մանր ու կտրատված հողատարածքները ոռոգելու համար դուրս է գալիս 2600 մարդ, այսինքն՝ ամեն մի սեփականատեր առաջինն ինքն է ցանկանում ոռոգել իր հողատարածքը»:

Զրուցեցի անվանի հողագործ, մի շարք շահաբերների ասպետ Ռաֆիկ Բաղալյանի, երիտասարդ այգեգործ Բաբկեն Պուլուզյանի, հացահատիկագործ Ռոբերտ Սարգսյանի եւ մի շարք հողագործների հետ, ովքեր հողի հետ անհոգի վարվելու, նրանից առավելագույնը չստանալու հանդուրժողականությունից դժգոհ էին: Բաբկենը 1 հա սեփականաշնորհված հին ու ծերացած խաղողի այգին ճանդել է եւ հիմնել պտղատու ծառերի այգի: Ջանադիր աշխատանքի շնորհիվ ստեղծվել է փարթամ ու հրաշալի այգեստան, սակայն դժգոհ է ոռոգման ջրի մատակարարումից. «Այգին տարեկան պետք է ջրվի 8-10 անգամ, մինչդեռ մեզ հազիվ հաջողվում է 3-4 ջուրը»: Իսկ Ռոբերտը բողոքներ է գրել մի շարք վերադաս կազմակերպություններին, որ պետականորեն սահմանված գնից տեղերում բարձր են հաշվարկում ոռոգման ջրի վարձը, սակայն ոչ ոք չի լսում նրա ձայնը: Բաբկենը դժգոհում է նաեւ, որ դեռ այգին բերքի չեկած՝ իրենից վարձ են պահանջում: Հողագործները դժգոհ են իրենց մենակ թողնելու, ստեղծված վիճակից դուրս չգալու, վերջնական ելք չգտնելու անորոշությունից: Կազմակերպված, արդյունավետ ոչ մի աշխատանք չի կատարվում: Հողագործ Մինաս Հակոբյանն իր ընկերոջ հետ ցանել է 0,5 հեկտար լոբի (սերմի գումարը պարտքով է վերցրել), եւ երբ ծաղկել է դաշտն ու անհրաժեշտ է եղել ոռոգել, ջուր չեն հատկացրել, դաշտը չորացել է: Չի ստացվել ոչ մի կիլոգրամ բերք: Պատկերացնել է պետք ամիսներ շարունակ հույսով ապրող աշխատավորի վիճակը: Իսկ խանձված դաշտեր, չորացած ու մոլախոտապատ այգիներ որքան ցանկանք կգտնեք:

Եվ իրոք, այս երկարատեւ անտարբերությունը, այս անպատասխանատվության չափերը մինչեւ ե՞րբ եւ մինչեւ ո՞ւր են ձգվելու: Ընթացիկ տարում մարզի տնտեսություններին պետք է հատկացվեր 900 տոննա ազոտական պարարտանյութ, չհատկացվեց ոչ մի կիլոգրամ: Հողն ամլանում է, ավելանում են մացառուտները: Մարում է հողագործի ոգեւորությունը:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ
Էջմիածին

Սիրիան ձգտում է խաղաղության, սակայն օկուպացված Գոլանի հարցում զիջումների չի դիմի

Եվրամիության պատվիրակությունը ժամանելու է Միջին Արևելք, Իսրայելը ԵՄ-ին «արդար միջնորդ» չի համարում

Ուրբաթ օրը Եվրամիության (ԵՄ) պատվիրակությունը ժամանելու է տարածաշրջան՝ իսրայելա-պաղեստինյան բռնությունները դադարեցնելու եւ միջինարեւելյան խաղաղ գործընթացը շարունակելու ակնկալիքով: Եվրահանձնաժողովի նախագահ Ռ. Պրոդին, ԵՄ անվտանգության ղեկավար Խ. Սոլանա եւ Բելգիայի արտգործնախարարը բարձր մակարդակով հանդիպումներ կունենան Կահիրեում, Թել Ավիվում, Երուսաղեմում, Դամասկոսում եւ Ամմանում: Իսրայելը կանխավ հայտարարել է, թե արաբա-իսրայելական խաղաղության հարցում ԵՄ-ին «արդար միջնորդ» չի համարում: Այսպիսով, ԵՄ պատվիրակության անհաջողության համար ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ: Իսրայելը «արդար ու ազնիվ միջնորդ» է համարում միայն եւ միայն ԱՄՆ-ին. հակառակը՝ արաբական երկրները, առաջին հերթին Սիրիան, շարունակում են հորդորել Վաշինգտոնին, ճնշադաստել վերջինիս ընդգծված «իսրայելամետ քաղաքականությունը»:

ԱՄՆ-ը, Ռուսաստանը, ԵՄ-ը չեն կասկածում, որ առանց Սիրիայի «այո»-ի անիմաստ է խոսել Միջին Արեւելքում համապարփակ խաղաղություն հաստատելու մասին: Չի կասկածում նաեւ Իսրայելը եւ այդ պատճառով փորձում բանակցային գործընթացից հեռու պահել Դամասկոսին. այս մարտավարությունն ընդունում եւ խրախուսում է Վաշինգտոնը: 1979 թ. Քեմփ Դեյվիդում ԱՄՆ միջնորդությամբ հաշտություն կնքվեց Իսրայելի եւ Եգիպտոսի միջեւ, ապա 1994 թ. «բարեկամացան» Իսրայելն ու Հորդանանը: Վաշինգտոնը կփորձի նույն սցենարով հաշտեցնել Իսրայելին եւ Պաղեստինին, վստահ լինելով, որ դրան ընդդիմանալու է Սիրիան:

Նյու Յորքում, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ամենամյա ճնշարկումների շրջանակներում Սիրիայի արտգործնախարար եւ միջինարեւելյան բանակցություններում գլխավոր բանագնաց Ֆարուկ ալ Շարաան հանդիպումներ է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ք. Փաուելի, ՌԴ արտգործնախարար Ի. Իվանովի, ԵՄ անվտանգության ղեկավար Խ. Սոլանայի հետ. վերջիններս հավաստիացրել են, թե միջինարեւելյան խնդրի խաղաղ կարգավորումը պետք է հիմնված լինի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 242, 338 եւ 425 բանաձեւերին, այսինքն հոչակվում է Պաղեստինի անկախությունը. երուսաղեմ մայրաքաղաքով, Իսրայելը դուրս է բերում ուժերը 1967 թ. գրավյալ տարածքներից՝ Արեւմտյան ափից, Գազայի հատվածից, Հարավային Լիբանանից, Գոլանի բարձունքներից: Սակայն, եթե Ռուսաստանը եւ ԵՄ-ն Իսրայելից պահանջում են ՄԱԿ-ի բանաձեւերը կատարել ամբողջությամբ, ոչ թե՝ փուլ առ փուլ, ապա նույնը չի պատրաստվում պահանջել ԱՄՆ-ը: Վաշինգտոնը, շահարկելով ՄԱԿ-ի բանաձեւերը, նախ փորձելու է հաշտեցնել հրեաներին ու պաղեստինցիներին, ապա «լուծել» Սիրիայի հարցերը:



Սիրիան, որը 1979 թ. (երբ արաբական աշխարհում առաջատար Եգիպտոսը Իսրայելի հետ ստորագրեց Քեմփ Դեյվիդի խաղաղության դաշնագիրը, ստանձնել է արաբա-իսրայելական հակամարտության արաբական ճամբարի առաջնորդի դերը, համաձայն է խաղաղություն հաստատել Իսրայելի հետ, պայմանով, որ վերջինս վերադարձնի 1967թ. վեցօրյա պատերազմում օկուպացրած Գոլանի բարձունքները ամբողջությամբ, ինչին կտրականապես դեմ է Թել Ավիվը, պնդելով, թե Սիրիան Գոլանի բարձունքների մի մասը գրավել է 1948 թ. արաբա-իսրայելյան առաջին պատերազմի ընթացքում:

Գոլանը Սիրիայի 14-րդ նահանգն է, գտնվում է երկրի հարավ-արեւմուտքում, ամենակարճ ճանապարհով Սիրիան կապում Լիբանանին, Հորդանանին եւ Պաղեստինին: Վարչական կենտրոն Ալ Կունեյտրա (թարգմանաբար՝ կամուրջ) քաղաքում, որի 20 տոկոսը գրավվել եւ գտնվում է Իսրայելի վերահսկողության տակ, սիրիացի մի պատշտոնյա **«Ազգի»** հետ զրույցում նշեց. «Գոլանի ընդհանուր տարածքը 1.860 քառ. կմ է, որից 1.260-ը օկուպացված է: Ռազմական ագրեսիայի ընթացքում հրեաները ավերեցին 244 քաղաքներ, գյուղեր եւ ագարակներ: Այժմ Գոլանում հիմնվել են 42 բնակավայրեր, որտեղ ապրում են 17-20 հազար հրեաներ՝ աշխարհի տարբեր անկյուններից: Իսրայելն այսօր էլ շարունակում է հրեաներով բնակեցնել Սիրիայի պատմական հողերը»: Պաշտոնյայի կարծիքով, Իսրայելի վարչապետների միջեւ որեւէ տարբերություն չկա. «Շամիրը, Ռաբինը, Պերեսը, Նաթանյահուն, Բարաքը խոսում էին Սիրիայի հետ խաղաղություն հաստատելու, այդ խաղաղության դիմաց Գոլանը վերադարձնելու մասին, մինչդեռ իրականում ժամանակ էին շահում եւ շարունակում հրեաների բնակեցումը այս տարածքներում: Խաղաղության մասին է խոսում նույնիսկ ծայրահեղական Շարոնը. այս ամառ Գոլանի օկուպացված գյուղերից մեկում նա երդվեց, որ Գոլանը հրեական պատմական հող է եւ ընդմիշտ պատկանելու է Իսրայելին»:

Ալ Կունեյտրա քաղաքի հասարակայնության հետ կապերի գրասենյակի տնօրեն Սամիր Ղաթը մեզ հետ զրույցում Գոլանի բարձունքների նշանակությունը կարեւորեց չորս առումներով. «Ռազմավարական չափազանց կարեւոր նշանակություն ունեն. Ալ Կունեյտրայից Լիբանանի սահման 30 կմ է, Պաղեստին՝ 25, Հորդանան՝ 70: Բոլոր ճանապարհները Իսրայելի վերահսկողության տակ են: Երկրորդ՝ ով վերահսկում է Գոլանը, վերահսկում է Հորդանան գետն ու Թաբարիա լիճը, երրորդ՝ Գոլանի բարձունքներից բխում է 172 աղբյուր, եւ վերջապես սրանք Սիրիայի ամենաբարեբեր հողերն են»:

«Գոլանի հարցում մենք երբեք զիջումների չենք դիմի Հարցրու յուրաքանչյուր սիրիացու՝ Գոլանը մերն է», ասաց Սամիրը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Ալ Կունեյտրա, Գոլանի բարձունքներ

ՆՅՈՒ ՅՈՐՔ

ՄԱԿ-ը փորձում է Աֆղանստանում ստեղծել ժամանակավոր խորհուրդ

Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնակայանում երեքշաբթի տեղի ունեցած նիստում հանգամանորեն խոսվեց Աֆղանստանում միջազգային ընկերակցության ձեռնարկելիք քաղաքական, աղահովական եւ մարդասիրական գործողությունների մասին: Աֆղանստանում ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ Լախդար Բրահիմին նոր էր վերադարձել տարածաշրջանից եւ հանդես եկավ հատկանշորեն պատրաստված զեկուցումով:

Զեկուցման համաձայն առաջարկվում է Աֆղանստանում ՄԱԿ-ի գործողությունների հնգափուլ ծրագիր, որտեղ առանձնապես կարեւորվում են Աֆղանստանի բոլոր ուժերի ներկայացուցիչների հանդիպումը եւ երկրում խաղաղապահ ուժերի տեղաբաշխումը:

Առաջին փուլում նախատեսվում է կազմակերպել Հյուսիսային դաշինքի եւ աֆղանական մյուս խմբավորումների ներկայացուցիչների համաժողով, որտեղ ստեղծվելու է ժամանակավոր խորհուրդ: Բրահիմին առաջարկում է խորհրդի ղեկավար նշանակել «բոլոր ուժերի կողմից ճանաչված եւ հարգված անձնավորության», նախապատվությունը տալով Աֆղանստանի նախկին թագավոր Զահիր Շահին:

Երկրորդ փուլում ժամանակավոր խորհուրդը կազմելու է 2 տարով գործող անցումային վարչակազմ: Երրորդ փուլում անցումային վարչակազմը կփորձի ստեղծել սահմանադրություն, որը հաջորդ փուլում հիմք կծառայի կառավարության կազմավորման համար: Եվ միայն դրանից հետո՝ հինգերորդ փուլում հնարավոր կլինի խաղաղապահ ուժեր ուղարկել Աֆղանստան: «Լիբերասիոն» թերթը գրում է, որ ՄԱԿ-ում էլ երը կուզենային «կապույտ սաղավարտներին» տեսնել Աֆղանստանի վտանգավոր պայմաններում: Մասնավորապես Ֆրանսիայի արտգործնախարար Յուբեր Վեդրինն իր ելույթում նշեց, որ խաղաղապահ ուժեր «կարելի է ուղարկել Աֆղանստանում խաղաղության հաստատումից հետո»:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի գծով հատկացվելիք մարդասիրական օգնությանը, ուրբաթ օրը Նյու Յորքում կհավաքվեն «Մեծ ութնյակի» ընդլայնված կազմի՝ G21-ի պետությունների ներկայացուցիչները, որպեսզի ճնշարկեն միջազգային ընկերակցության նոր ֆոնդի ստեղծման պայմանները:

Պ. Բ.

Աֆղանստանում քառային վիճակ է ստեղծվում

Սկիզբը էջ 1

Աֆղանստանի պայմանները հաճախ ծգրիտ տեղեկություններ ստանալու հնարավորություն չեն տալիս լրագրողներին: Տվյալ դեպքում, սակայն, կարեւորը ոչ այնքան տեղեկությունների ծգրտությունն է, որքան մի շարք քաղաքներից թալիբների ինքնակամ հեռացումն ու հեռացման ամերիկյան արձագանքները: Նոյեմբերի 14-ի առավոտյան թուրքական հեռուստատեսությունը նշեց Քաբուլի գրավումից բխող ԱՄՆ-ի մտավախությունների մասին: Դրա սեփական բղթակիցը Նյու Յորքից ավելացրեց. «Փաստի առնչությամբ Վաշինգտոնի կառավարող շրջանակները պարզապես շփոթված են»: Ինչո՞ւ: Այդ հարցին պատասխանեց «Զաման» թերթը. «Հյուսիսային դաշինքի մուտքը Քաբուլ տակնուվրա արեց քաղաքական բոլոր հաշվարկները»: Քանի որ դրան նպաստել էին թալիբները՝ լքելով քաղաքը, ուրեմն, նրանք էլ իրենց հաշվարկներն ունեն: Թերեւս նաեւ Վավախությունների, ինչպես նաեւ Վաշինգտոնի կառավարող շրջանակների շփոթվածության աղբյուրը հենց այդ հաշվարկներն են եւ հաշվարկներով պայմանավորված քաոսը, որը հետզհետե խորանում է Աֆղանստանում:

Առաջին հայացքից թվում է, թե Հյուսիսային դաշինքի առջեւ առանց դիմադրության նահանջելով, թալիբները փորձում են խնայել զինուժն ու տեխնիկան, որպեսզի երկրի փուլուներով բնակեցված շրջաններում դիրքերն ամրապնդեն, ապա պարտիզանական կռիվների համար ապավինեն լեռներին: Հիրավի, թալիբները նահանջել են այնպիսի շրջաններից, որոնք բնակեցված են Հյուսիսային դաշինքի կազմում ընդգրկված ուժերին հարող էթնիկ տարրերով, կամ Մոհամադ Զահիր Շահին հավատարիմ ցեղերով: Այսինքն՝ թալիբներն առանց դիմադրության դաշինքին են զիջում այդ ցեղերով բնակեցված տարածքը, ինչպիսին է Քաբուլն իր շրջակայքով:

Ուրեմն, թալիբների նահանջը տարերային բնույթ չի կրում, այլ՝ ծրագրված է: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Հյուսիսային դաշինքի հետագա առաջխաղացումն անհամեմատ բարդ է լինելու, գուցե հակազդեցության պայմաններում հենց քաոսի մեջ է հայտնվելու հեղհեղուկ այդ դաշինքը եւ սովելու են դրա մաս կազմող ուժերի փոխհակասությունները: Հարցը, սակայն, սոսկ դաշինքը չէ, այլ՝ միջազգային ուժերը: Եթե դրանցից Ռուսաստանը, Իրանն ու Հնդկաստանը հովանավորում են դաշինքին, իսկ Պակիստանը՝ թալիբներին, ապա ԱՄՆ-ը քաղաքական հաշվարկներ է կատարում Զահիր Շահի վրա: Այդ ընթացքում Քաբուլ մեկնելու պատրաստակամությամբ ասպարեզ է իջնում Աֆղանստանի նախկին վարչապետ Բուրհանուդդին Ռաբանին: Ավելին, նա ի պատասխան օտարերկրյա լրագրողների հարցերի, ասում է. «Զահիր Շահը կարող է Աֆղանստան վերադառնալ, եթե համակերպվի շարքային քաղաքացու կարգավիճակին»: Փաստորեն նա դրանով իրեն է հակադրում Շահին հավատարիմ ցեղերին: Հարկ է սակայն նշել, որ Քաբուլի անակնկալ գրավման ֆոնին էլ ՄԱԿ-ը Ռաբանիին է հակադրվում: Այդ առումով պատահական չէր Աֆղանստանի գծով ՄԱԿ-ի ներկայացուցչի աֆղանական քաղաքական բոլոր ուժերի մասնակցությամբ Արաբական Միացյալ Էմիրություններում համագումար հրավիրելու կոչը, առավել եւս՝ Աֆղանստան Թուրքիայի, Հորդանանի եւ եվրոպական երկրների զորամիավորումներից կազմավորված խաղաղարար ուժեր գործուղելու առաջարկը:

Ըստ երեւույթին վերոհիշյալ կոչն ու առաջարկը, ինչպես Քաբուլի գրավումն էր, նմանապես մտավախություն է պատճառելու ԱՄՆ-ին: Աֆղանստանում քաղաքական զարգացումների ընթացքը ՄԱԿ-ի միջնորդությամբ պայմանավորելու Հյուսիսային դաշինքի, Ռաբանիի, ինչպես նաեւ Ռուսաստանի, Իրանի, Հնդկաստանի եւ Չինաստանի միտումները գաղտնիք չեն: Ակնհայտ է նաեւ ահաբեկչության դեմ պայքարում, մասամբ նաեւ Աֆղանստանում ընդդեմ թալիբների ծավալվող պատերազմում վերջիններիս, եթե ոչ ռազմական, գոնե քաղաքական կամ դիվանագիտական աջակցությունն ԱՄՆ-ին: Ուստի թալիբները Հյուսիսային դաշինքի առջեւ ինքնակամ նահանջելիս ոչ միայն Աֆղանստանում են քաոս ստեղծում եւ Աֆղանստանորեն խորացնում, այլեւ՝ արհեստականորեն խորացնելով երկրի քաղաքական զարգացումներին ՄԱԿ-ի ներգրավմանը, շահագրգիռ միջազգային ուժերին միմյանց են հակադրում: Այդ ընթացքում Մ. Նահանգները Աֆղանստանում թե՛ նախաձեռնությունից է զրկվում եւ թե՛ ակամա շեղվում է այն նպատակից, որն իր առջեւ դրել է աֆղանական պատերազմում:

Աֆղանստանի քաղաքական ճակատագիրը միանձնյա կանխորոշելու ամերիկյան միտումները ենթադրում են երկրում ԱՄՆ-ի նախաձեռնության վերականգնում: Թերեւս դրա արդյունավետ միջոցը Աֆղանստանում ցամաքային գործողությունների դիմելն է: Դա անխուսափելի է դարձնում ամերիկյան զորքերի մուտքը երկիր, բայց եւ այնպես, ԱՄՆ-ն անխուսափելիորեն բախվում է Հյուսիսային դաշինքի ուժերի հակազդեցությանը: Բախման դեպքում ամերիկացիները զրկվում են աֆղանական պատերազմն արդարացնելու, առավել եւս դրա սանձազերծումն Ուսամա բեն Լադենի «Ալ Ղաիդա» կազմակերպության եւ թալիբների ահաբեկչական գործողություններով պայմանավորելու հնարավորությունից: Ուրեմն, թալիբներն Աֆղանստանում քաոս ստեղծելով հենց քաոսի մեջ են ներքաշում ԱՄՆ-ին: Ահա թե ինչու պատերազմական գործողությունները շուրջ մեկուկես ամիս շարունակվում են, բայց ամերիկացիները չեն կարողանում ոչ թալիբներին իշխանությունից հեռացնել՝ կոտրելով նրանց դիմադրությունը, ոչ կազմալուծել «Ալ Ղաիդան», ոչ էլ Ուսամա բեն Լադենին բռնել: Դա հավանական չի թվում, պարզապես թալիբների ծրագրված նահանջով ԱՄՆ-ը հեշտությամբ քաոսի մեջ է մխրճվում:

ՄՇԱԿՈՒՅԹ

«Փախստականները»

Փախստականները, թողած օջախ ու հայրենիք, թողած ծնող ու մերձավոր, այսօր թափառում են աշխարհով մեկ մարդկային արժանապատվությունից զրկված ու արհամարհված: Նրանց հոծ զանգվածներն ալեկոծվում են հատկապես եվրոպական պետություններում: Եվ ահա Ռաֆայել Ալոյանի «Փախստականները» փաստավավերագրական վիպակը մի փորձ է փախստականների կյանքի ամբողջական պատկերը ներկայացնելու ընթերցողին: Փախստականների աճող քանակները պետք են թելադրել գրականության մեջ այս թեմային նույնպես առնչվելու: Հեղինակը, ինքը լինելով փախստականի կարգավիճակում, տարիներ շարունակ Իսպանիայում, Գերմանիայում, Բելգիայում, Հոլանդիայում ու Ֆրանսիայում ականատես է եղել տարբեր ազգերի ներկայացուցիչ փախստականների աննախանձելի ու թշվառ վիճակներին: Մի պատառ հացի համար կորցրած պատիվ ու ինքնասիրություն, ոտնատակ արած ամեն բարոյականություն, իրենց հողից արմատախիլ եղած չեչենն ու հայը ադրբեջանցին ու ռուսը երբեմն օրերով մնում են բաց երկնքի տակ, սնվում են անտառային արմտիքով ու, ինչ-որ հույս փայփայելով, հայցելով օտարի ողորմածությունը, դեռ տոկում են, երբեմն էլ մահկանացու կնքում հայրենիքի կամ հարազատի անունը շշնջալով: Փախստականի ճակատագիրն անհայտությունն է: Նա օրերով կարող է մնալ անոթի, կարող է գիշերել պատահած ավերակում կամ ավտոտնակին հենված, ցրտին ու անձրևին կարող է թափառել փողոցներում, երկաթուղային կառամատույցներում՝ հույսը կապելով, որ լույսը կբացվի՝ բարին հետը: Իսկ այդ սպասվելիք բարին փախստականի համար շատ դեպքում դառնում է սոսկալի հիասթափություն: Ահա մի հատված: «Երանք ցանկապատի ազատ տեղանքով շինարարական հրապարակը խցկվեցին: Վախվորած, կիսակառույցի բոլոր անկյունները զննելուց հետո, ծածկած որևէ տեղ չգտան: Մի փոքրիկ անկյունում կուչ եկան: Գիշերային ցուրտը սաստիկ նեղեց: Չդիմացան: Գիշերային լռին քաղաքն իր ամայի փողոցներով ուրվականի տեսք ուներ: Քամին ու ցուրտը սուրում էին... Գնանք, գուցե մի ծածկ գտնենք...»: Կամ «Ոչ որ գլխի չի ընկնի, որ այստեղ Աստծո զավակներն են ապրում: Մեր այս նոր որջը մեծ առավելություն ունի Դեն-Բոս քաղաքի կիսաբեն կառույցի մեր նախկին որջից...»:

Ոչ միայն անծածկ կացարան, այլեւ թերսնվելը նույնպես օտարության մեջ գտնվող անգործի համար սովորական իրավիճակ է: Նա կարող է օրերով մնալ անորոշ վիճակում, մինչեւ որ հարցազրույցի հրավիրեն եւ ընդունեն որեւէ ճամբար: Իսկ երկրից անպայման մի գեղեցիկ օր դուրս անելու երեւույթն ամեն ժամ սպասելի է: Փախստականների հոծ բազմության մեջ հանդիպելով պարսիկների, աղվանցիների եւ այլ ազգերի ներկայացուցիչների, հեղինակը խորամուխ է լինում, թե ով ինչ շարժառիթներից է անդասականի ցուցը վերցրել: Թե ինչպես հայը Հասան է դառնում, ադրբեջանցին Հրաչիկ, եւ երբեմն հակ է լինում փոխելու կրոն ու դավանանք, այսինքն երրորդական, չորրորդական կարգի մարդ համարվող փախստականի համար ոչ մի տեսակ սրբություն այլեւս գոյություն չունի, եւ ավազակության, ամեն տեսակ անմարդկային արարքների ճանապարհը բաց է նրա առջեւ: Հարությունը Ադրբեջանի Խանլար բնակավայրից է: Ծննդավայրից, հայտնի պատճառներով, տեղափոխվում է Հայաստան: Այստեղ էլ բնակարան եւ աշխատանք չունենալու պատճառով ընտանիքով տեղափոխվում է Ռուսաստան: Այստեղ էլ թեեւ որոշակի հաջողություններ է ունենում, սակայն անարխիստ, ուրիշների հաշվին ապրող թալանչիները նրանից ամսական որոշակի գումար են պահանջում (անտերությունը, անպատժելիությունն ամենուրեք միեւնույն դեմքն ունեն): Հարությունը, դառնացած անարդարությունից ու մեռած օրենքներից, ընտանիքով բռնում է փախստականի անհեռատես ու անհուսալի ուղին:

Օտար ափերում մարդը դառնում է թեւը հատած թռչուն՝ ենթակա ամեն տեսակ սոցրացումների, կենցաղային աշխատանքային սպասարկման իրավիճակների: Հեղինակի եզրակացությունը թեեւ այն է, որ աշխարհը նեղ է դարձել, ու մարդը խորթացել է իր իսկ ակունքներից, սակայն ավելի համոզիչ եզրակացությունն ունի արմատական աղերսներ: Որ հայրենիք չունեցող մարդու ավարտը մոռացությունն է, ուր էլ լինի նա, ինչպիսի պայմաններում էլ որ գտնվի, նա կմահանա՝ մնալով անհիշատակ ու անանուն: Տխուր վախճան են ունենում վիպակի փախստական հերոսներից շատերը: Ընթերցողի հիշողության մեջ տպավորված փախստականների շարքերն էլ ասես ուրվականներ են, որոնք շարժվում են դեպի անհայտություն, կամ՝ կործանում, կամ՝ վերջնական ուծացում: Ասացինք, որ գիրքը մի փորձ է ահագնացող այս երեւույթին անդրադառնալու գեղարվեստական-վավերագրական ստեղծագործության միջոցով: Ընթերցողն էլ իրավամբ լայն պատկերացումներ է կազմում փախստականների վայրիվերո կյանքի մասին, նրանց մտորումների, անձնական զրույցների, ճշմարտության, անարդարության հետ ճակատ առ ճակատ բախվելու, զավեշտական ու ողբերգական իրավիճակներում հայտնվելու մասին:

Գրքի առաջաբանում հեղինակը գրում է. «Ներկայացնելով բոլոր այն դժվարությունները ու պարումները, ցանկությունս է, որ իմ պետությունն ու ժողովուրդը կարողանան ստեղծել քաղաքական-տնտեսական բարվոք մթնոլորտ հայաթափությունը կանխելու համար»: Գրքի ընթերցումից հետո իմանում ես վարագույրից այն կողմ կատարվածի մասին, սակայն միաժամանակ ափսոսում, որ հեղինակը դրսեւորել է շատախոսություն, եւ գիրքը չի խմբագրվել ինչպես որ հարկն է:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՅԱՆ

Գուրգեն Գաղաչիկի տիեզերական տարածքը

... Փոքր-փոքրաչափ մի էակ, մի մարմին՝ պարուհի թե գլամարտիկ, նույնիսկ խեղկատակը, փառասերը, մեծ, անսահման տիեզերական տարածության մեջ հավերժ է պտտվում, եւ պտտվում է անկաշկանդ, իրեն բնորոշ ոգով, իր կերպարով: Տիեզերքի անսահմանության մեջ իրենց տեր են զգում նաեւ իրերը՝ փոքած լվացքը, ջուրակը, թռչունը, իսկ մոլորակների շքերթն ամբողջացնում է այդ ամենը... եւ ներկայանում դիտողին բարակ, նրբահյուս մետաղի միջոցով: Այդ ինչ ունակությամբ ու հմտությամբ պետք է օժտված լինի թեկուզ ամենավարպետ վարպետը, որի մատների տակ դյուրահալ արծաթափայլ մետաղն այդպես դառնա կերպար, կերպարային մտածելակերպ, ավելին՝ արտահայտի իրականությունից, ժամանակի զգացողությունից-ըմբռնումից բխած երեւույթը, թեման, հուզմունքի պատճառը, խորհելու տրամադրություն արթնացնի, տեղ-տեղ էլ՝ խոհափիլիսոփայական ներուժն ու միտքն ակնհայտորեն մտահոգի: Իհարկե, կա այս եզակի արվեստի կրողը՝ Գուրգեն Գաղաչիկը, եւ կան նրա ստեղծած հազվագյուտ, մնայուն արժեքները, որոնք երեկ, Ազգային պատկերասրահում բացված անհատական ցուցահանդեսի միջոցով դարձան արվեստասեր հասարակության սեփականությունը:

Մասնակիցներն անտարբեր չէին եւ չէին կարող թաքցնել իրենց հիացմունքն այդպիսի՝ ոսկերչական մանրամասնությամբ ու նրբությամբ կատարված աշխատանքների հանդեպ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ ունեին գունային աշխատանքները, հատկապես՝ «Աշխարհի ստեղծումը», որն իր ակնհայտ պարզությամբ միաժամանակ անսովոր բարդ ու հետաքրքիր էր, եթե պատկերացնենք, թե ինչպես է ստեղծվում մետաղարվեստի գրաֆիկական գործը: Եվ յուրաքանչյուր աշխատանք իր ենթատեքստն ունի, հեղինակի՝ արվեստագետի ընկալման ու մեկնաբանության գեղեցիկ, ազնիվ, ճշմարիտ հատիկը:

Գուրգեն Գաղաչիկ արվեստագետի ընկերները, մտերիմները, իրենց բնութագրական խոսքերի մեջ չմոռացան ընդգծել, որ երբ նա 1989-ին սկսեց իր այս, առաջին հայացքից անսովոր ու գրեթե տարօրինակ, շատերի համար անհասկանալիության չափ բարդ ու դժվարին սկիզբը, թերահավատորեն էին վերաբերվում, բայց երբ միմյանց հաջորդեցին նորանոր գործեր, երբ ցուրտ, խավար ու գորշ տարիներին շատերն իրենց գլուխն առան ու երկրից սլացան, Գուրգեն Գաղաչիկը մնաց ու ստեղծեց այս գեղեցիկ, ուրույն աշխարհը, որ մեզ՝ բոլորիս շատ է պետք: «Քեզ, բոլորիդ համար է իմ ստեղծածը, խնդրեմ, ասե՛ք», համեստորեն ասում էր Գուրգենն իր անհատական ցուցահանդեսի ներկաներին ու սիրով պատասխանում իրեն շրջապատած լրագրողներին: Երկխոսության ընթացքում ավելի պարզ ու լսելի էր դառնում Գուրգեն Գաղաչիկ կենսախինդ մարդու հումորը, մարդու լավագույն որակական հատկանիշը:

ԱՐԵՎԻԿ ՎԱՐԴԱՄՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

«Գազանը լուսնի վրա». նոր բեմադրություն Համբուրգում

Ինչպես կանխատեսել էինք օրեր առաջ «Ազգում», գերմանական եւս մեկ քաղաքում՝ Համբուրգի Ամերիկահաուսում բեմադրվել եւ, ըստ տեղական ռադիոյի, մեծ հաջողություն է գրանցել Ռիչարդ Կալինոսկու «Գազանը լուսնի վրա» պիեսը: Բեմադրիչը Դիդի Դանֆուարդն է, դերերում հանդես են գալիս Դոմինիկ Հորվիթցը, Գերդ Քունցտը եւ Էսթեր Ցիմմերինգը, որը հետաքրքիր է մարմնավորում Սեդայի դերը: Ներկայացման առաջնախաղը կայացել է նոյեմբերի 8-ին: Այս բեմադրությունը թատերական-բեմական տաղանդով օժտված դպրոցահասակ երեխաների համար յուրատեսակ տոն-ստուգատես է երեւանում անցկացվող մանկապատանեկան թատերական փառատոնը՝ «Նռան հատիկ» խորհրդանշական խորագրով:

«Ծրագիրը հագեցած է երկու տասնյակ բեմադրություններով», պատմում է նախածեռնողներից մեկը՝ Ա. Շիրակացու անվան ճեմարանի դրամատիկական թատերախմբի գեղարվեստական ղեկավար Գարիկ Ղազարյանը: «Փառատոնը խաղի մեջ է ներգրավել երեւանի մի շարք միջնակարգ դպրոցների (Պուշկինի, Աղայանի, Զոհրաբի, Իսահակյանի անվան) եւ մանկապատանեկան թատրոն-ստուդիաների, մշակութային այլ կենտրոնների սաներին: Թե՛ դպրոցների, թե՛ նեյալ՝ «Շոկոլադ», «Նախաբեմ», «Ծիլ բուսաց», «Առկառուին», «Ինդիվիդում» ստուդիաների, «Հույսի կամուրջ» (հաշմանդամների հասարակական կազմակերպության), «Ավետիս» եւ Արաբկիրի հայորդաց տուն մանկական թատրոնի պատանի դերասանները վարպետությամբ են ներկայացնում հայ եւ ռուս գրողների, դրամատուրգների, մանկագիրների ու հայտնի հեքիաթագիրների գործերը, խաղում են էսքիզներ ու միջնադարյան ֆրանսիական լեգենդ, «Տիրամայր» ու «Նարեկացի»:

Փառատոնի խաղացանկը բազմազան է նաեւ ժանրային առումով՝ մնջախաղ (Պուշկինի անվան դպրոց), մյուզիքլ («Հասմիկ» մանկապատանեկան երաժշտական թատրոն): Այն ողջ ոգեւորությունը, հոգեկան եռանդն ու ուրախությունը, որ տիրում է մեկամսյա փառատոնի ընթացքում, հիմնականում «Մետրո» թատրոնի դահլիճում, գրեթե ամեն օր, երեկոյան ժամը 18:00-ից հիմք է տալիս մեզ ձգտելու, որ մանկապատանեկան այս առաջին փառատոնը դարձնենք ավանդական», հավատիացնում է կազմակերպիչը:

Փառատոնը գուցե նաեւ ընդլայնի շրջանակները եւ հաջորդ անգամ անվանվի արդեն հանրապետական՝ ներգրավելով նաեւ մարզերի, գյուղական բնակավայրերի պատանի դերասաններին ու թատրասերներին:

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

«Նռան հատիկ»

Արսեն Սողոմոնյանը՝ «Ռոմանսիադա» միջազգային մրցույթի հաղթող

ԵՐԵՎԱՆ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բելառուսի Մոգիլյով քաղաքում ավարտված ռուսական ռոմանսի «Ռոմանսիադա» միջազգային մրցույթը հաղթանակ բերեց երեւանցի երիտասարդ երգիչ Արսեն Սողոմոնյանին (լիրիկադրամատիկական բարիտոն), որն առաջ անցավ Ուկրաինայից, Բելառուսից, Ղազախստանից, Էստոնիայից, Ղրղզստանից եւ այլ երկրներից ժամանած իր մոտ 20 գործընկերներից: Ըստ որում, երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի առաջին կուրսի ուսանողը հանդես էր գալիս այլ երկրների օպերային թատրոնների եւ ֆիլհարմոնիաների արդեն ճանաչված մենակատարների ընկերակցությամբ:

Ըստ դոցենտ Ռաֆայել Հակոբյանցի, իր սանը ոչ միայն հիացրել է հանդիսականներին, այլեւ՝ 9 մարդուց բաղկացած ժյուրիին, որի կազմում էին այնպիսի հռչակավոր երգիչներ, ինչպիսիք են Ալլա Բայանովան, Բորիս Շտոկոլովը, Վիրգիլիուս Նորեյկան, ուրիշներ:

Երեւանցի երգիչը երաժշտական նախնական կրթությունը ստացել է մայրաքաղաքի Սերգեյ Բարխուդարյանի անվան դպրոցում, որն ավարտելով այս տարի ընդունվել է կոնսերվատորիա: Անցյալ տարի նա դափնեկիր կոչման է արժանացել վոկալիստների հանրապետական մրցույթում:

Մոսկվայում նշվել է Թարգմանչաց տոնը

ՄՈՍԿՎԱ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության մշակութային կենտրոնի հերթական միջոցառումը նվիրված էր հայ գրական-մշակութային կյանքի նշանակալի իրադարձություններից մեկին՝ Թարգմանչաց տոնին: Այն անցկացվել է անցյալ կիրակի, ԻՏԱՌ-ՏԱՍՍ լրատվական գործակալության հանդիսասրահում:

Կազմակերպության լրատվական-վերլուծական կենտրոնի տեղեկատվության համաձայն, հնչել են Սայաթ Նովայի, Երզնկացու, Տերյանի, Գեւորգ Էմինի, Սիլվա Կապուտիկյանի, Չարենցի, Պարույր Սեւակի եւ հայ այլ դասական ու ժամանակակից բանաստեղծների գործեր՝ բանաստեղծ-թարգմանիչներ Ելենա Նիկոլաեւսկայայի, Աշոտ Սահակյանի, Նինա Գաբրիելյանի եւ ուրիշների կատարմամբ:

Գրական-երաժշտական երեկոյին մասնակցել են նաեւ «Դասական ժառանգություն» մրցույթի դիպլոմակիրներ, դաշնակահարներ Միքայել եւ Հրանտ Հայրապետյանները, միջազգային մրցույթի դափնեկիր, Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտ Եկատերինա Լեղենյովան (Հայաստանի ժողովրդական արտիստ Յուրի Հայրապետյանի դասարան):

ԹԱՂՐԱՆԿԱՐՅԻ ԱՇՔԵՐՈՎ

ԱԶԳ

Մարզական

«Ոսկե գնդակի» 50 հավակնորդները

Ավանդույթի համաձայն յուրաքանչյուր մրցաշրջանի ավարտին «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթը լրագրողների հարցման միջոցով որոշում է Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստին, որին հանձնվում է «Ոսկե գնդակ» մրցանակը: Վերջին տարիներին «Ֆրանս ֆուտբոլը» նախապես հրապարակում է այն 50 ֆուտբոլիստների ցանկը, որոնցից լրագրողները պետք է ընտրեն լավագույնին: 2001 թ. «Ոսկե գնդակին» հավակնող 50 ֆուտբոլիստների ցանկն այսպիսին է.

Անդերսոն, Անրի, Բաջիո, Բարտեզ, Բաստիստուտա, Բեքհեմ, Բուֆոն, Գիգզ, Դեսայի, Դել Պիեռո, Զիդան, Էֆենբերգ, Էլբեր, Էլգերա, Թյուրամ, Թոմազի, Լարսոն, Լիզարազյու, Խասելբայնկ, Խյուտյա, Կաֆու, Կանդելա, Կարյեր, Կոեստո, Կան, Կյուել, Կլույվերս, Կուֆֆուր, Մենդյետա, Նակատա, Նեդվեդ, Նեստա, Շեւչենկո, Ջերարդ, Ռաուլ, Ռիվալդո, Ռոբերտո Կառլոս, Ռուի Կոստա, Սանդ, Սկոուլզ, Տոտտի, Տրեզեգե, Վերոն, Վիեյրա, Պաուլետա, Պիրես, Օուեն, Օլիսադեբե, Ֆեռդինանդ, Ֆիգու:

Հավակնորդների ցուցակում բոլորից շատ ընդգրկված են ֆրանսիացի ֆուտբոլիստներ (11 հոգի): Այնուհետեւ գալիս են իտալացիները (6 ֆուտբոլիստ) եւ անգլիացիները (5): Հիշեցնենք, որ անցյալ տարվա լավագույն ֆուտբոլիստները Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Լուիշ Ֆիգուն էր: Մասնագետների կարծիքով, այս տարվա մրցույթի հաղթողի հիմնական թեկնածուներն են «Ռոմայի» ավագ Ֆրանչեսկո Տոտտին եւ լիվերպուլցի Մայքլ Օուենը: Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի անունը հայտնի կդառնա դեկտեմբերի 18-ին:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ֆետիսովի ազգանունը գրանցվեց փառքի սրահում

Կանադական Տորոնտո քաղաքում գտնվող հոկեյի թանգարանի փառքի սրահում եւս 5 նոր հանրահայտ հոկեյիստների ազգանուններ են գրանցվել: Ֆինն Յարի Կուրիի, ամերիկացի Կրեյգ Պատրիկի, կանադացիներ Մայք Գրանտների եւ Դեյլ Խավերչակի հետ փառքի սրահի նոր անդամ է դարձել նաեւ խորհրդային փառաբանված հոկեյիստ Վյաչեսլավ Ֆետիսովը, որն իր մարզական կենսագրության վերջին տարիներն անցկացրեց Կանադայում՝ հաջողությամբ հանդես գալով հոկեյի ազգային լիգայի ակումբներում: Վյաչեսլավ Ֆետիսովը երկար տարիներ հանդես է եկել Մոսկվայի ԲԿՄԱ-ում եւ հոկեյի ԽՍՀՄ, այնուհետեւ Ռուսաստանի հավաքականներում, մասնակցել է աշխարհի առաջնություններին ու օլիմպիական խաղերին՝ դառնալով բազմակի չեմպիոն: Կանադայում եւս նա իրեն լավագույն կողմերով դրսեւորեց՝ թիմի հետ նվաճելով Կանադայի գավաթը եւ «Սթենլիի գավաթը»: Ներկայումս Վյաչեսլավ Ֆետիսովը Ռուսաստանի հոկեյի օլիմպիական հավաքականի գլխավոր մարզիչն է:

Լսենք, որ խորհրդային մարզիկներից մինչեւ Ֆետիսովը փառքի սրահում գրանցված էին Անատոլի Տարասովի եւ Վլադիսլավ Տրետյակի ազգանունները:

Տիմուլովիչը Բելառուսի լավագույն ֆուտբոլիստ

Բելառուսական «Պրեսբոլ» շաբաթաթերթի հարցման արդյունքներով ազգային հավաքականի եւ «Ռոստսելմաշ» դարպասապահ Գենադի Տիմուլովիչը ճանաչվել է մրցաշրջան-2001-ի լավագույն ֆուտբոլիստ: Երկրորդ տեղում է ազգային հավաքականի եւ Կիեւի «Դինամոյի» կիսապաշտպան Վալենտին Բելկեւիչը: Լավագույն եռյակը եզրափակում է «Միլանի» հարձակվող Վիտալի «Կուտուզովը»:

Բելառուսի լավագույն ֆուտբոլիստի որոշման մրցույթն անցկացվեց 11-րդ անգամ: Հարցման 250 մասնակիցների թվում էին մարզական լրագրողները, ֆուտբոլային մասնագետները, բարձրագույն խմբի մարզիչները, մրցավարները, ակումբների եւ հավաքականների ավագները:

Արժեթղթերի գնման/վաճառքի համար դիմել Հայաստանի Ֆոնդային Բորսայի անդամ բրոքերային ընկերություններին

Արդինբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Թումանյան 28/20
Հեռ.՝ 542674

Արմենբրոկ ՓԲԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 528986

Ալինվեստ ՍՊԸ
ք. Երեւան, Ռոստովյան 21, բն. 41
Հեռ.՝ 454112, (09) 429412

Ասպետ ՍՊԸ
ք. Երեւան, Ե. Քոչար 21/1, բն. 37
Հեռ.՝ 571218

Արժեթղթեր Կենտրոն ՍՊԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 525801, 581578

Աստբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Կոմիտաս 22/50
Հեռ.՝ 222725, 278469

Ալիխանյան Բրոքեր ՍՊԸ
ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 45ա
Հեռ.՝ (051) 40297

Այս Երզրումցի ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 71/27
Հեռ.՝ (051) 22422

Այտի Բրոկ Դիլ Տրաստ ՍՊԸ
ք. Երեւան, Հալաբյան 47, բն. 31
Հեռ.՝ 348837

Գոլդ-Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան,Գ. Լուսավորչի 15/1
Հեռ.՝ 525822

Երեւան-Բրոքեր ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
Հեռ.՝ 524357, 151820

Էյթեն-Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50, բն. 26
Հեռ.՝ 528232, 540914

Ինվեստհաս ՓԲԸ
ք. Երեւան, Զարյան 8, բն. 30բ
Հեռ.՝ 567767, 582478, 562404

Կապիտալ Ինվեստ ՍՊԸ
ք. Երեւան, Ազաթանգեղոսի 7
Հեռ.՝ 569680, 526417

Կապիտալ Մենեջմենթ ԲԲԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
Հեռ.՝ 560138

Կապիտալ Տրաստ ՓԲԸ
ք. Երեւան, Գ. Լուսավորչի 15/1
Հեռ.՝ 580745

Մ.Գ.Ս. ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 242-1
Հեռ.՝ (041) 22184, (051) 23109

Նորդ-Վեստ-Ինվեստ ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 247
Հեռ.՝ (041) 30868

Պրիվաս Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50/ 26
Հեռ.՝ 521812, 521051, 528778

Սարբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Գայի 24
Հեռ.՝ 630480, 542547

Վրինկո ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 24, բն. 5
Հեռ.՝ 531805

Տոնտոն ՍՊԸ
ք. Երեւան, Դեղատան 2
Հեռ.՝ 545477, 545407

Օրիգինալ Ինվեստ ՓԲԸ
ք. Երեւան, Վարդանանց 5ա
Հեռ.՝ (09) 420449

Armex
Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2001 թ. Նոյեմբերի 13-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆԵՐՈՒՄ

Թողարկող Issuer	Հաղ. ABBR	Հարթակ Listed	Գնում՝ Bid Լավագույն գին Best price	Գնում՝ Bid Միջ. կշռ. գին Avg. price	Գնում՝ Bid Ընդհանուր գին Total qnt.	Վաճառք՝ Ask Լավագույն գին Best price	Վաճառք՝ Ask Միջ. կշռ. գին Avg. price	Վաճառք՝ Ask Ընդհանուր գին Total qnt.	Կատարված գործարքներ Transactions Ցածր գին Day low	Բարձր գին Day high	Միջ. կշռ. գին Avg. price	Փոփ.% Avg%	Ծավալ (հազ. դրամ) Volume
ԱՅՐՈՒԻՄ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Գ/Ն	APAH	B											
ԱՊԱՄԵԿՈՒՍԻՉ	APAK	B											
ԱՐԴԱՆ Էլ.ՄԵԽ.Գ/Ն (ՎԱՆԱՁՈՐ)	ARDV	B											
ԱՐՇԱԼՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՐՓԱՍԵՎԱՆ	ASEV	B	1,000.0	1,000.0	1								
ԱՍՏԿԱՄԱՇ (ԱՐԹԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈՎԱԳԵՂԱՏՆԵՐԻ Գ/Ն	AVAG	B	600.0	600.0	20								
ԱՎԻԱՀԱՍԱԼԻՐ	AVHM	B	90.0	90.0	80								
ԱՎՏՈԲԵՌՆԻՉ	AVTB	B	600.0	600.0	20								
ԱՎՏՈՍԱՏԿԱ Գ/Ն	AVTM	B	300.0	300.0	1								
ԻՋԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԻՏ Կ/Տ	BENT	B											
ԲՀԵՍ-ՊԼԱՍՄԱ	BHSP	B											
ՉԱՐԵՆՑ ԳՈՐԾԻՔԱՐԻՆ Գ/Ն	CHGG	B											
ԿՈՊԻՏԱԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ	CPMT	B											
ԴԱԼԻՏՍԻԻ ԱՐՏ. ՏՐ. Մ/Կ	DAJK	B											
ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺՏԵՂ Գ/Ն	DBJG	B											
ԴԱԼԻՏՍԻԻ ՍՈՌՈՂ ՀԼ	DJAH	B											
ՉՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ	DZKT	B	400.0	400.0	10								
ԷԼԵԿՏՐՈԵՆԳԱՐԻՏՍԱՐՔ	ECHS	B											
ԷՆՄԻԱԾՆԻ ՍԱՐՔԱՇԻՆ Գ/Ն	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺՇՆԵՐԻ Գ/Ն	EELJ	B											
ԵՐՖՐԵԶ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ. ՀԻԴՐՈՀԱՂՈՐԴԱԿ Գ/Ն	EHHG	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ Գ/Ն	EJWG	B											
ԵՐԿԱԹԲԵՏՈՆ-7	EKB7	B											
ԵՐ. ԿԵՆՑՈՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ Գ/Ն	EKOG	B	400.0	400.0	100	900.0	900.0	33					
ԷԼԵԿՏՐԱՊՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՍՈՆՅԱ	ELMJ	B											
ԵՂՎԱՐԴԻ ՍԱՐՇԱԿՈՇԻԿՆԵՐԻ Ֆ/Ս	EMKFCO	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍԵՔՍՈՐ	EMQR	B											
ԵՄՏԱ	EMTA	B											
ԷՆՄԻԱԾՆԻ ՊԼԱՍՏԱՍՍ Գ/Ն	EPLG	B											
ԵՐԱԶ	ERAZ	B											
ԵՐ. ԺԱՄԱՑՈՒՅՑԻ Գ/Ն	ERJG	B	1,350.0	1,350.0	20								
ԵՐԿԱԹԲԵՏՈՆ	ERKB	B											
ԵՐ. ՇԱՄՊԱՆ ԳԻՆԻՆԵՐԻ Գ/Ն	ESHG	B	450.0	450.0	129								
ՍԼԱՎԻՏ ՕԵԼ Գ/Ն (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B	1,000.0	1,000.0	5								
ՎԱՆ Ա/Ֆ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ Գ/Ն - 1	EVGI	B											
ՍԼԻՎ	GANV	B											
ԳՈՐԻՍԻ ԳԱՄՄԱ	GGAM	B											
ԳԵԳԱՄԱ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐԻԻ ՄՍԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱՅԱԳՈՐԾԱՆԿ	HAGB	B											
ՀԱՇԻՇ	HASH	B	100.0	100.0	9,410								
ՀԱՏԻՍ	HATC	B											
ՀԱՅՕԽՍԽՈՏ	HATS	B	1,500.0	1,440.0	50	2,500.0	2,500.0	54					
Հ.Է.Ղ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	B											
ՀԱՅՔԻՄՄԵՔԵՆՍ	HOMQ	B											
ՀԱՅՔ.ՇԻՆՍԽՍԳԻԾ	HSHN	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՄՈՒՐՋԻՆ	KMSH	B											
ԿԱՆԿԱ	KNKA	B											
ՈԵԼԵ Գ/Ն (ԿԱՊԱՆԻ)	KREL	B											
ՍԱՔՈՒՐ ԵՐԿԱԹ Գ/Ն	MQER	B	2,220.0	2,220.0	5								
ՄԱՐՇՈՒՆԻՆ	MRSH	B											
ՄԵՐՉԱՆԿՈՎՅԱՆ	MSKV	B											
ՍՍՍԻՍ ՏԱԲԱԿ	MSTB	B	400.0	400.0	7								
ՄԵՏՐԻՆ	MTSH	B											
ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՏՐՈԿՈՏԱԺԻ Ֆ/Ս	NBTF	B											
ՆԵՅՐՈՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՌԱՍՏՐ Գ/Ն	RSTR	B											
ՌԵՁՈՒՍՏՐ	RZTR	B											
ՍԵԼԵՆԱ	SELN	B											
ՇԻՆՍԵԲԵՆՍՈՐՈԳՈՒՄ	SHMN	B											
ԵՐ. ՇՈՒՇԱՆ ՏԵՔՍՏԻԼ Կ/Տ	SHTK	B											
ԿԱՏԱՐՈՂ ՍԱՐՔ Գ/Ն	SKSG	B											
ՏՈՍՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐԻՆ	UKSH	B											
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆԱՁՈՐԻ ԿՈՇԻԿԻ Ֆ/Ս	VAKF	B											
ՎԱԿՈՒՍԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՎԱՌ Գ/Ն	VEVG	B											
ՎԱՆՇԻԿ	VSHK	B											
ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ Գ/Ն	VTMG	B				8,000.0	8,000.0	1,000					
ԵՐԵՎԱՆ-ԿԱՅՈՒՅՔ	YKHQ	B											
ԵՐ. ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Գ/Ն	YPHG	B											
ԵՐ. ՈԵԼԵԻ Գ/Ն	YRLE	B											

* Չրաչառված գնանախանշանները/հարցանքարկվածները հարցերի մասին տեղեկության առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները 33 դրամով:
** 4 կիրից կազմված հարաբերությունը դա բաժնետիրական ընկերության հասարակ անվանական բաժնետոմսի հարաբերությունն է: Այն դեպքում, երբ 4 կիրից բարձր նշված է CO, արդյա դա ՍՊԸ-ի բաժնեմաս է:
Այլ տեղեկություններ հասանելի են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

ՀԱՄԱՌՈՏ

Ութ հավակնորդներից հինգը հայտնի են

Ֆուտբոլի Եվրոպայի երիտասարդական առաջնության 8 մասնակիցներից 5-ն արդեն հայտնի են: Եզրափակիչի ուղեգիր են ձեռք բերել Բելգիայի, Անգլիայի, Հունաստանի, Չեխիայի եւ Պորտուգալիայի հավաքականները: Դա հայտնի դարձավ 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպումներից հետո:

Բելգիայի հավաքականը սեփական հարկի տակ վեդերներին հաղթեց 2-0 հաշվով՝ ռեւանշի հասնելով մրցակցի դաշտում կրած պարտության դիմաց (2-3): Անգլիացիները ուղեգիր նվաճեցին շնորհիվ հոլանդացիների դարպասը խփած միակ գոլի (առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 2-2): Թուրքիայի ֆուտբոլիստները թեեւ սեփական դաշտում հաղթեցին Հունաստանի ընտրանուն (2-1), սակայն ուղեգիրը բաժին հասավ հույներին, քանի որ առաջին խաղում նրանք հաղթել էին խոշոր՝ 3-0 հաշվով: Չեխիայի եւ Պորտուգալիայի հավաքականները եզրափակիչ մտան շնորհիվ մրցակցի դաշտում խփած գոլի: Չեխերը խորվաթների հետ սեփական դաշտում էլ ոչ-ոքի խաղացին. այս անգամ դարպասները մնացին անառիկ (առաջին խաղում գրանցվել էր 1-1 հաշիվ): Պորտուգալացիները 1-0 հաշվով հաղթեցին իտալացիներին, որոնց հյուրընկալվելիս զիջել էին 1-2 հաշվով:

Եզրափակիչի մնացած 3 մասնակիցները հայտնի դարձան երեկ ուշ երեկոյան կայացած 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպումներից հետո: Հետաքրքիր է, որ սեփական հարկի տակ հանդես եկած բոլոր 3 հավաքականներն էլ առաջին խաղում հյուրընկալվելիս հաղթել էին մրցակիցներին, ուստի եզրափակիչ դուրս գալու նրանց հնարավորությունները գերադասելի էին: Հիշեցնենք առաջին հանդիպումների արդյունքները՝ Լեհաստան-Իտալիա՝ 2-5, Ռումինիա-Ֆրանսիա՝ 0-1, Ուկրաինա-Շվեյցարիա՝ 1-2:

Վախճանվեց բրիտանացի առաջին գրոսմայստերը

Բիրմինգհեմի իր բնակարանում գտնվել է անգլիացի հանրահայտ շախմատիստ, 46-ամյա Էնտոնի Մայլզի դիակը: Ոստիկաններն առայժմ չեն պարզել մահվան պատճառը: Մայլզը 2 անգամ ամուսնացել եւ բաժանվել էր, երեխաներ չուներ:

Էնտոնի Մայլզը իրոք տաղանդավոր շախմատիստ էր: Նա բրիտանացի առաջին գրոսմայստերն էր, որն այդ կոչմանն արժանացել էր 21 տարեկանում: 1976 թ. Շեֆիլդի համալսարանի ուսանողը նվաճեց պատանիների աշխարհի չեմպիոնի տիտղոսը: 70-80-ական թթ. Մայլզը տեղ էր գբաղեցնում աշխարհի 10 լավագույն շախմատիստների թվում: 1984 եւ 1986 թթ. շախմատային օլիմպիադաներում նա արժանացել էր արծաթե մեդալի:

Յուիթի երկրորդ հաղթանակը

Սիդնեյում ութ ուժեղագույն թենիսիստները շարունակում են մրցավեճն աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: Առաջին խմբում ընդգրկված բրազիլացի Գուստավո Կուերտենն անհաջող մեկնարկեց՝ պարտվելով խորվաթ Գորան Իվանիշեւիչից: Վերջինս Կաֆելնիկովի հետ 1-ական միավորով գլխավորում է առաջին խմբի մրցաշարային աղյուսակը:

Իսկ ահա ավստրալացի Լեյթոն Հյուիթը հարազատ հարկի տակ վերելով է հանդես գալիս: 2-րդ խմբում նա իր երկրորդ հաղթանակը տոնեց՝ այս անգամ պարտության մատնելով Անդրե Աղասուն (6-3, 6-4): Հյուիթն առայժմ սանձնել է առաջատարի դերը:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Մ. Նահանգները Իսրայելից պահանջում է վերսկսել բանակցությունները

Մ. Նահանգների պետքարտուղար Քոլին Փաուելը երեկ հայտնել է, որ իրենց կողմից մեծագույն սխալ էր Իսրայելի վարչապետի պահանջով Մերձավոր Արևելքում հարդության կայունացման խաղաղ բանակցությունների վերսկսման 7-օրյա հետաձգումը: Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը Պաղեստինից պահանջել է 7-օրյա լիակատար խաղաղություն տարածաշրջանում, մինչդեռ իրավիճակը շարունակվում է մնալ լարված, եւ չեն դադարում փոխադարձ վայրագությունները ու ահաբեկչությունները:

Մ. Նահանգների նախագահ Ջ. Բուշը եւ Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը երեկ Վաշինգտոնում կայացած հանդիպման վերջում հանդես են եկել հայտարարությամբ, որով իրենց խորն անհանգստությունն են արտահայտել Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակի կապակցությամբ: Նրանք կոչ են արել Իսրայելին եւ Պաղեստինի Ինքնավարությանը պետական ամենաբարձր մակարդակով անմիջապես վերսկսել խաղաղ բանակցությունները: «Պաղեստինում տիրող իրավիճակն աննկարագրելի տառապանքների պատճառ է դարձել վերջին տարվա ընթացքում: Պետք է անհապաղ վերջ տալ ահաբեկչություններին եւ վայրագություններին», ասվել է հայտարարության մեջ:

Մ. Նահանգները Իսրայելից պահանջում է հրաժարվել խաղաղ բանակցությունները 7 օրով հետաձգելու առաջարկից եւ անհապաղ նստել բանակցությունների սեղանի շուրջ:

Ռ. Պ.

ԱՄՆ-ը խոստանում է 50 մլն դոլար հատկացնել ՎՈՒՈՒԱՄ-ի զարգացմանը

ԲՍԲՈՒ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ԱՄՆ-ը պատրաստ է մոտ 50 մլն. դոլար հատկացնել ՎՈՒՈՒԱՄ տարածաշրջանային կազմակերպության տրանսպորտահաղորդակցական միջանցքների գործառնության համար: Ինչպես հաղորդում է «Թրենդը», ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչները հայտարարել են, որ ԱՄՆ կառավարությունը զորակցում է ՎՈՒՈՒԱՄ-ին որպես ժողովրդավարական գոտի Ռուսաստանի հարավային սահմանների երկայնով:

ՆԱՏՕ-ի հրամանատարա-շտաբային զորավարժություններ Բաքվում

ԲՍԲՈՒ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Բաքվում սկսվում են ՆԱՏՕ-ի Cooperative-Determination 2001 բազմազգ խաղաղարարական հրամանատարա-շտաբային զորավարժությունները: Ինչպես հաղորդում է «Էխոն», Բաքու են ժամանել զինվորականներ 18 երկրներից: Զորավարժությունները ղեկավարելու է Եվրոպայում ՆԱՏՕ-ի միացյալ հարավ-արեւելյան շտաբի հրամանատար, Թուրքիայի բանակի գեներալ Օֆսար Ասամանը: ՆԱՏՕ-ի նման զորավարժություններ Կովկասում անցկացվում են առաջին անգամ:

Ելցինն էլ է «սպիտակ» նամակ ստացել

ԻՐԿՈՒՏՍԿ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Իրկուտսկում փոստատան աշխատողները հայտնաբերել եւ պետական սանիտարա-համաճարակաբանական հսկողության կենտրոն են ուղարկել սպիտակ փոշի պարունակող նամակ՝ հասցեագրված Ռուսաստանի առաջին նախագահ Բորիս Ելցինին: Ինչպես «Ինտերֆաքս» գործակալությանը հայտնել են կենտրոնում, սպիտակ նյութը փաթեթավորված է եղել պոլիէթիլենային ծրարով: Ծրարում որեւէ գրություն չի եղել: Ըստ սանիտարական բժիշկների, արտաքուստ նյութը ճանաչելը բարդ է: Արդեն հայտնի է, որ դա ոչ լվացքի փոշի է եւ ոչ էլ կարտոֆիլի ալյուր:

Երկրաշարժ Չինաստանում

ԵՐԵՎԱՆ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Նոյեմբերի 14-ին, տեղական ժամանակով ժամը 13:26-ին Չինաստանի տարածքում տեղի է ունեցել երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվում է Ցզինխունշան քաղաքից 50 կմ հյուսիս-արեւելք:

ՀՀ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունից հայտնեցին, որ երկրաշարժի ուժգնությունը էպիկենտրոնում կազմել է 8-9 բալ:

Объявление

Методиками многомерной медицины радикально излечиваются перечисленные заболевания: депресия, страхи, галюцинации напряженность, хроническая усталость.

Мастер "Рейки"
ШШ степении
Ашот Акопян
Тел. 25-31-51

«Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունը հայտարարում է հեռուստաընկերություններին տեխնիկական աջակցության մրցույթ: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից: Մրցույթի նպատակն է՝ խրախուսել հեռուստաընկերությունների սեփական արտադրությունը՝ մասնավորապես, լրատվական ծրագրերի զարգացումը: Մրցույթում հաղթած հեռուստաընկերությունները կստանան հեռուստատեսային սարքավորումների հավաքածու՝ ըստ հետեւյալ խմբերի՝

- Երեւան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում հեռարձակող հեռուստաընկերությունների համար.

ա) Հեռուստահաղորդաշար եւ համակարգիչների ցանց՝ նորությունների բաժնի աշխատանքների ավտոմատացման համար (1 հաս)
բ) Հեռուստահաղորդաշար եւ ոչ գծային մոնտաժող համակարգ (1 հաս)
գ) Հեռուստահաղորդաշար եւ թվային տեսախցիկ (1 հաս)

- Հայաստանի մարզերում գործող (բացի 1-ին խմբում նշված քաղաքներից) այն հեռուստաընկերությունների համար, որոնք 1996-2001 թթ. ընթացքում «Ինտերնյուսից» հեռուստատեսային սարքավորումներ չեն ստացել.

ա) Փոքր մոնտաժային համակարգ (թվային տեսախցիկ, հենակ, տեսագրիչ, ոչ գծային մոնտաժող համակարգ) (2 հաս)
բ) Լուսագրման համակարգ (լուսագրման սարք եւ հիմնական համակարգիչ) (2 հաս)

Մրցույթին կարող են մասնակցել այն հեռուստաընկերությունները, որոնք
- ունեն համապատասխան գրանցում եւ հաճախության օգտագործման արտոնագիր կամ պայմանագիր
- եթեր են հեռարձակվում առնվազն երկու տարի
- ունեն գովազդային իրացման բաժին
- պետական աղբյուրներից դրամական օժանդակություն չեն ստանում
- կանոնավոր կերպով նորություններ են թողարկում:

Անհրաժեշտ փաստաթղթերը.

- լրացված դիմում (օրինակը կարելի է ստանալ «Ինտերնյուսի» գրասենյակից)
- հաճախականության օգտագործման արտոնագրի (կամ պայմանագրի) եւ գրանցման վկայականի պատճենները
- հաշվապահական փաստաթղթեր պետության նկատմամբ պարտքի բացակայության մասին (հարկային տեսչությունից, կենսաթոշակային հիմնադրամից)
- նորությունների բաժնի զարգացման հայեցակարգի նախագիծ (3 էջ)
- կազմակերպության կառուցվածքը (նխեմա)՝ մանրամասնելով նորությունների բաժնի կառուցվածքը
- հեռուստաընկերության կողմից օգտագործվող սարքավորումների ցուցակը
- 2001 թ. հոկտեմբերին եթեր հեռարձակված նորությունների մեկ թողարկման տեսագրությունը
- նորությունների բաժնի աշխատակիցների մասնագիտական դասընթացների ավարտական վկայականների պատճենները:

Ընտրության չափանիշները.

- *Ներկայացված նորությունների որակը եւ օբյեկտիվությունը (20 միավոր)*: Նորությունների որակը կգնահատի անկախ հանձնաժողովը նորությունների գնահատման «Ինտերնյուսի» կողմից սահմանված սանդղակի համապատասխան:
- *Հայեցակարգի նախագծի մասնագիտական որակը (25 միավոր)*: Սա նորությունների բաժնի զարգացման հայեցակարգի նախագիծն է, ուր պետք է ցարադրվի, թե հեռուստակայանն ինչ նպատակով է օգտագործելու նոր սարքավորումները:
- *Հեռուստակայանի ֆինանսական ինքնուրույնության եւ անկախության գործոնը (25 միավոր)*: Ղեկավարը չպետք է լինի տեղական կամ պետական կառավարման աշխատակից: Պետք է ներկայացվեն հաշվապահական փաստաթղթերը եւ նշվեն եկամտի բոլոր աղբյուրները: Հաշվի է առնվելու նաեւ գովազդից գոյացած եկամտի տոկոսը:
- *Կազմակերպության կառավարման մակարդակը (20 միավոր)*: Որոշվում է՝ ըստ ներկայացված փաստաթղթերի եւ տեղեկությունների:
- *Հեռուստաընկերության աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը (10 միավոր)*: Որոշվում է՝ ըստ համապատասխան մասնագիտական կրթության եւ դասընթացների մասնակցության, ինչպես նաեւ ներկայացված նորությունների որակի:

** Առավելություն կտրվի Հայաստանի այլ հեռուստաընկերությունների հետ համագործակցող հեռուստաընկերություններին:*

Ընտրությունը կայացնելու է տեղացի եւ արտասահմանցի մասնագետներից ընտրված հատուկ հանձնաժողովը: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ նոյեմբերի 30-ը: Մրցույթի արդյունքները կհրապարակվեն մինչեւ 2001 թ. դեկտեմբերի 31-ը:

Մեր հասցեն՝ Երեւան, Արշակունյաց պող. 3, 3-րդ հարկ, «Ինտերնյուս»
հեռ. 583620; 525527
e-mail: office@internews.am

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն
Երեւան, Հայաստան
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հանրային հարաբերությունների բաժինն ուրախ է հայտարարել ժողովրդավարության եւ կառավարման փոքր դրամաշնորհների ծրագիր:

Նպատակը
Ծրագրի նպատակն է փոքր չափի դրամական օժանդակություն տրամադրել Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների զարգացմանն աջակցող հատուկ ծրագրերի եւ նախաձեռնությունների իրականացմանը: Դրամաշնորհները կտրամադրվեն հասարակական կազմակերպություններին (ՀԿ-ներին) եւ անկախ լրատվամիջոցներին: Մրցույթի հավակնորդները պետք է արդեն իրականացնելիս լինեն կամ նախատեսեն իրականացնել այնպիսի ծրագիր, որի նպատակն է Հայաստանում ժողովրդական հաստատությունների զարգացման խթանումը:
Հայաստանում հանձնաժողովն առավել հետաքրքրված է այնպիսի ծրագրերով, որոնք վերաբերում են ժողովրդավարական հաստատությունների ստեղծմանը, օրենքի իշխանությանը /արդարադատության վարչարարությանը, տեղեկատվության ազատ տարածմանը, քաղաքացիական կրթությանն ու քաղաքացիական հասարակությանը, մարդու իրավունքներին, էթնիկ եւ քաղաքական ներդաշնակությանը. այսինքն՝ հանձնաժողովը կօժանդակի այն ծրագրերին, որոնք խթանում են բաց/ քաղաքացիական հասարակության զարգացումը:

Հատուկ ուղենիշներ
■ Դրամաշնորհի առավելագույն չափը 24,000 ԱՄՆ դոլար է: Այդուհանդերձ, ելնելով որոշակի աշխատանքային սկզբունքներից, դրամաշնորհները հիմնականում կլինեն 10,000 ԱՄՆ դոլարից փոքր, հազվադեպ՝ 15,000 ԱՄՆ դոլար:
■ Դրամաշնորհները տրամադրվում են միանվագ: Հաջողակ դիմորդներն առաջին դրամաշնորհով ծրագրի հաջող իրականացումից հետո կարող են դիմել երկրորդ դրամաշնորհը ստանալու համար, սակայն երկրորդ դիմում-առաջարկը պետք է վերաբերի միանգամայն այլ ծրագրի:
■ ԱՄՆ կազմակերպություններն ու անհատները չեն կարող դիմել վերոնշյալ ծրագրով հայտարարված դրամաշնորհային մրցույթին:
■ Ծրագիրը չի կարող ֆինանսավորել՝ մարդասիրական օգնություն եւ բարեգործական գործունեություններ, գիտական հետազոտություններ, համաժողովներ եւ դեպի արտասահման անհատական ուղեւորություններ, առեւտրային գործունեություններ, ծրագրեր, որոնց նպատակը միմիայն կազմակերպության առաջնային ինստիտուցիոնալ զարգացումն է:

Գնահատման չափանիշները
Դիմում-առաջարկները կգնահատվեն ըստ ծրագրի թեմայի, հստակ ձեւակերպված խնդիրների եւ թիրախ խմբերի, ինչպես նաեւ ծրագրի նպատակներն իրագործելու՝ կազմակերպության կարողության: Դրամաշնորհները տրամադրվում են տեղում, Վաշինգտոնում USIA կողմից՝ ծրագրի ընդունումից (հաստատումից) հետո:

Հայտերի ներկայացման կարգը
Դիմորդները պետք է լրացնեն պաշտոնական դիմումի ձեւ՝ **անգլերեն լեզվով**, որում ներկայացվում է կարեւոր տեղեկատվություն դիմորդ կազմակերպության եւ նրա գործունեության վերաբերյալ, ինչպես նաեւ առաջարկված ծրագրի մանրամասն նկարագիրը:
Դիմորդները պետք է խուսափեն աշխատավարձերի վճարման, սննդի եւ խմիչքի գնման նպատակով դրամաշնորհ խնդրելուց:

Խորհուրդ
Կարելի է կից ներկայացնել դիմում-առաջարկի լրջությունը հավաստող հանձնարարական նամակներ:

Դիմորդների տեղեկացումը/ դրամաշնորհային գործընթացը
Բոլոր դիմորդները գրավոր կտեղեկացվեն հանձնաժողովի որոշմանը, դիմում-առաջարկին վերջինիս ծանոթանալուց հետո:
Հաջողված առաջարկների դեպքում դրամաշնորհային ողջ գործընթացը տեւում է մոտավորապես ութ (8) շաբաթ (հանձնաժողովի կողմից առաջարկի ստանալուց մինչեւ այն պահը, երբ դրամական միջոցները տրամադրվում են օգտագործման համար):

Դրամաշնորհի տրամադրումը եւ հաշվետվությունների պահանջը
Դրամաշնորհները կտրամադրվեն երկու կամ ավելի փուլով: Առաջին մասը կտրամադրվի ծրագիրը սկսելու նպատակով: Դիմորդները պետք է միջանկյալ հաշվետվություններ ներկայացնեն առաջին փուլում տրամադրված դրամական միջոցների օգտագործման վերաբերյալ, նախքան լրացուցիչ միջոցների ստացումը: Նշված հաշվետվության բացակայության պարագային դրամական միջոցների հետագա փոխանցում չի կատարվի:

Ամփոփիչ հաշվետվություններ
Բոլոր հաջողակ դիմորդները պետք է ծրագրի ավարտին պաշտոնական հաշվետվություն ներկայացնեն ժողովրդավարական հանձնաժողովին: Հաշվետվության մեջ պետք է նշվի, թե ինչ է իրագործվել, արդյոք ծրագիրը հաջողված է ըստ դիմորդի, եւ ինչպես կարող է բարելավվել ապագայում: Հաշվետվությունը պետք է նաեւ ընդգրկի դրամաշնորհի միջոցների օգտագործման հաշվառումը: Նշված հաշվետվությունում պարունակող տեղեկատվությունը ժողովրդավարական հանձնաժողովին հնարավորություն կընձեռի ապագայում առավել հաջող գնահատել դիմում-առաջարկները:

Դիմումների ներկայացման ժամկետը սույն թվականի նոյեմբերի 30-ն է:

Դիմումի ներկայացման ուղենիշներն ու դիմումի ձեւը կարելի է ձեռք բերել՝
Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն
Հանրային հարաբերությունների բաժին
Բաղրամյան 18
Երեւան, Հայաստան

«Գինդ» տպագրատուն. Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 14. 11. 2001 Գինը՝ 100 դրամ